Կ-744²-14.12.2023-ՊԻ-011

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածում՝

1. 3-րդ մասում «համալրման ենթակա տեղերի քանակը» բառերից հետո լրացնել « և կցելով բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևանմուշը» բառերը:

2. 4-րդ մասի 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով. «6) բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ:»:

3. 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Հայտատուները հանձնում են գրավոր քննություն, որի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում, որակավորման հանձնաժողովը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում գրավոր քննության արդյունքում դրական գնահատական ստացած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:»:

4. Լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին, 7.2-րդ և 7.3-րդ մասերով.

«7.1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո անցկացվում է բանավոր քննություն: Բանավոր քննության ընթացքում թեկնածուին հարցադրումներ են արվում նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած բարեվարքության վերաբերյալ

խորհրդատվական եզրակացության վերաբերյալ: Որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուների ընտրության ընթացքում գնահատման ենթակա տվյալների թվում է նաև թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

7.2. Գրավոր և բանավոր քննություններից դրական գնահատական ստացած անձինք անցնում են հոգեբանական գնահատում: Քննություններից դրական գնահատական և հոգեբանական գնահատումը բարեհաջող անցած հայտատուներն ընդգրկվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում՝ որակավորման հանձնաժողովի որոշմամբ:

7.3. Գրավոր և բանավոր քննությունների անցկացման կարգը, հոգեբանական գնահատմանը վերաբերող հարցերի շրջանակը և լրացման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1.-ին, 1.2-րդ և 1.3-րդ մասերով՝

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձինք, որակավորման հանձնաժողովի կողմից ծանուցում ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում էլեկտրոնային համակարգում լրացնում են բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընգրկվելուն հավակնող անձինք որակավորման հանձնաժողովի կողմից ծանուցում ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում որակավորման հանձնաժողով են ներկայացնում բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ:

1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում որակավորման հանձնաժողովը առաջխաղացման ենթակա անձանց կողմից բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը լրացված լինելու

վերաբերյալ տեղեկացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

1.3. Ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ եզրակացությունը տրամադրելիս որակավորման հանձնաժողովի կողմից գնահատման ենթակա հանգամանքներից է նաև թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:»:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել նոր 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ մասերով՝

«4.1. Մինչ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից քննչական կոմիտեի նախագահի թեկնածուին Կառավարությանը ներկայացնելը՝ վարչապետի աշխատակազմը, իսկ քննչական կոմիտեի նախագահի տեղակալների թեկնածուներին, քննչական կոմիտեի նախագահի կողմից վարչապետին ներկայացնելը՝ քննչական կոմիտեի նախագահը, թեկնածուների կողմից լրացված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկները ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ քսանօրյա ժամկետում խորհրդատվական բնույթի եզրակացություն ստանալու նպատակով:

4.2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը քննչական կոմիտեի նախագահի թեկնածուի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունը տրամադրում է ՀՀ վարչապետին, իսկ քննչական կոմիտեի նախագահի տեղակալների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունը տրամադրում է քննչական կոմիտեի նախագահին:

4.3. Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից քննչական կոմիտեի նախագահի թեկնածուին Կառավարությանը ներկայացնելու, իսկ քննչական կոմիտեի նախագահի տեղակալների թեկնածուներին, քննչական կոմիտեի նախագահի կողմից վարչապետին ներկայացնելու հետ մեկտեղ ներկայացվում են նաև թեկնածուների կողմից լրացված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկները և Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունները:»:

Հոդված 4. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում « » կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված կարգով և սույն օրենքով նախատեսված դեպքերում ու ժամկետներում ներկայացնել բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկ:»:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, իսկ 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից այնպիսի վարքագիծ դրսևորելը կամ գույքային դրության առնչությամբ այնպիսի անհամապատասխանությունը, որը հանգեցրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրելուն:»:

Հոդված 6. Օրենքի 31-րդ հոդվածի.

1. 1-ին մասում «նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի միջնորդությամբ:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում խորհրդատվական բնույթի բացասական

եզրակացություն ներկայացնելու դեպքում պարտադիր հարուցվում է ծառայողական քննություն:»:

2. 3-րդ մասում «կարգապահական վարույթի» բառերը փոխարինել «ծառայողական քննության» բառերով:

3. 4-րդ մասում «Կարգապահական վարույթը» բառերը փոխարինել «Ծառայողական քննությունը» բառերով:

4. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին մասով.

«4.1. Ծառայողական քննությունը հարուցվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքում բացասական բնույթի եզրակացությունը տրամադրելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց վեց տարի հետո (բացառությամբ բարեվարքության գույքային դրության առնչությամբ հարուցվող ծառայողական քննությունների): Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության շրջանակներում գույքային դրության ուսումնասիրության արդյունքում խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրելու դեպքում ծառայողական քննությունը հարուցվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բացասական եզրակացությունը տրամադրելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում:»:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31.1-ին հոդվածով.

«Հոդված 31.1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրությունը

1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրությունն իրականացվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով՝ առաջին անգամ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում նշանակվելու տարվանից հետո

վեցերորդ տարում: Քննչական կոմիտեի նախագահը և նրա տեղակալները բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն չեն անցնում:

2. Նախկինում քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած այն անձը, ով պաշտոնավարումը դադարելուց հետո, կրկին նշանակվում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում, բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնում է կրկին պաշտոնում նշանակվելուց հետո վեցերորդ տարում:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված ժամկետները հաշվարկվում են քննչական կոմիտեի ինքնավար պաշտոնում նշանակվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:

4. Այն դեպքում, երբ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում նշանակվելուց հետո մինչև բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության տարին, անձը առաջխաղացման նպատակով անցնում է բարեվարքության ուսումնասիրություն, ապա բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության համար նախատեսված վեց տարվա ժամկետը սկսում է հաշվարկվել քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակ ընդգրկվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:

5. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով

6. Բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկը լրացվում է բարեվարության ընթացիկ ուսումնասիրություն անցնելու տարվա հունվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում:

7. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, սույն հոդվածով նախատեսված ուսումնասիրության արդյունքում ընդունված խորհրդատվական բնույթի եզրակացությունը տրամադրում է քննչական կոմիտեի նախագահին:»:

Հոդված 8. Օրենքի 35-րդ հոդվածի.

1. 14-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ նախաձեռնելով քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակում ներառելու գործընթաց.»:

2. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 14.1-ին, 14.2-րդ և 14.3-րդ մասերով.

«14.1. Սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունելուց հետո որակավորման հանձնաժողովը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին ծանուցում է՝ տասնօրյա ժամկետում բարեվարքության ուսումնասիրության հարցաթերթիկի՝ էլեկտրոնային համակարգում լրացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

14.2. Սույն հոդվածի 14.1-ին մասով նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում որակավորման հանձնաժողովը առաջխաղացման ենթակա անձանց կողմից բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում տվյալների լրացված լինելու վերաբերյալ տեղեկացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով մեկամսյա ժամկետում բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

14.3. Սույն հոդվածի 14.2-րդ մասում նշված անձանց բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո որակավորման հանձնաժողովը որոշում է կայացնում անձին առաջխաղացման ցուցակում ներառելու կամ չներառելու վերաբերյալ:»:

3. 16-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«16. Որակավորման հանձնաժողովի որոշումը հանձնաժողովի նախագահն ատեստավորման օրվանից հետո (բացառությամբ սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունելու դեպքի)՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է քննչական կոմիտեի նախագահին, իսկ սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետը սկսվում է հաշվարկվել սույն հոդվածի 14.3-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելուց հետո:»:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության շրջանակներում բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացման կարգը, բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշը, լրացման կարգը, հարցաթերթիկում ներառվող տվյալների մանրամասները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

2. Մինչ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկների լրացման էլեկտրոնային համակարգի գործարկումը բարեվարքության ուսումնասիրություն անցնող անձանց կողմից բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկները ներկայացվում են թղթային տարբերակով:

3. 2024 թվականին թվականին պետք է բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնի քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 20 տոկոսը, 2025 թվականին՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 25 տոկոսը, 2026 թվականին՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 25 տոկոսը, 2027 թվականին՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 30 տոկոսը:

4. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության վերաբերյալ առաջին ընթացիկ ուսումնասիրությունն անցնելու հերթականությունը սահմանվում է քննչական կոմիտեի նախագահի կողմից՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում:

5. 2024 թվականին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկը ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով քննչական կոմիտեի նախագահի կողմից բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնելու հերթականությունը սահմանելուց հետո մեկամսյա ժամկետում:

6. 2025, 2026 և 2027 թվականներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության

հարցաթերթիկը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում:

7. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձինք բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցելուց հետո բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնում են սույն օրենքի 31.1 հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում, որը սկսվում է հաշվարկվել բարեվարքության առաջին ընթացիկ ուսումնասիրություն անցնելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ընդունումը պայմանավորված է ՀՀ դատական համակարգում, դատախազությունում և քննչական մարմիններում բարեվարքության մակարդակի ամրապնդման և զարգացման անհրաժեշտությամբ, ՀՀ միջազգային պարտավորություններով ստանձնած հանձնառությունների իրագործման, Կառավարության կողմից ընդունված ծրագրերով և ռազմավարական փաստաթղթերով սահմանված առաջնահերթությունների, բարեվարքության ուսումնասիրության գործող կառուցակարգերի կատարելագործման և զարգացման ապահովման անհրաժեշտությամբ:

2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծի ընդունումը բխում է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը» հաստատելու մասին Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման (այսուհետ՝ Կառավարության ծրագիր) հավելված 1-ի 17-րդ գործողությունից, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման (Հակակոռուպցիոն ռազմավարություն) հավելված 2-ի 9-րդ միջոցառումից և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-L որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1133-L որոշումից (Դատաիրավական ռազմավարություն):

3. Ընթացիկ իրավիճակը

Բարեվարքությունը ներքին բնութագիր է, ինչը նշանակում է, որ մարդը գործում է որոշակի սկզբունքների և արժեքների համաձայն՝ առանց փոխզիջումների հնարավորության ո՛չ աշխատանքում, ո՛չ էլ անձնական կյանքում: Սա նշանակում է աշխատանքային պարտականությունների ազնիվ, բարեխիղճ, ճիշտ և ջանասիրաբար կատարում: Իրականում բարեվարքությունը դրսևորվում է դատական ակտերի կատարման մեջ օբյեկտիվորեն, լիակատար հավասարության մեջ, օրենքով սահմանված ժամկետների պահպանմամբ, և այս ամենը ապահովում է արարքի լիակատար օրինականությունը: Արդարության մեջ բարեվարքությունն շատ ավելին է, քան առաքինությունը. այն անհրաժեշտություն է:

Բարեվարքությունը վերլուծվում է երկու տարբեր տեսանկյուններից. «օրենքի գերակայություն», որտեղ բարեվարքությունը վերաբերում է պետական ծառայողի պրոֆեսիոնալիզմին (ներքին բարեվարքություն), և «ժողովրդավարություն», որտեղ

բարեվարքությունը վերաբերում է այն պատասխանատվությանը, որն արդարադատության համակարգը և նրա ինստիտուտները կրում են հասարակության առջև՝ հասարակության վստահությունը շահելու համար (բարեվարքությունը՝ արտաքին տեսանկյունից): Այնուամենայնիվ, պարզ է, որ երկու մոտեցումներն էլ, ի վերջո, մատնանշում են նույն բանը՝ պետական ծառայողի անձնական բարեվարքությունը: Երբ այս արժեքը նվազում է, ամեն ինչ վերածվում է երևույթի, ինչը մենք անվանում ենք կոռուպցիա[1]:

1) <u>Բարեվարքության ինստիտուտի կարևորումը պետական համակարգում</u>

<u>Ա) Դատական համակարգի մասով.</u>

«Բարեվարքություն» տերմինը դատական համակարգի անդամների նկատմամբ կիրառելիս կարող է սահմանվել որպես ամբողջական հայեցակարգ, որը վերաբերում է դատական համակարգի կամ դատական համակարգի առանձին անդամի՝ կոռուպցիայի բոլոր ձևերին դիմակայելու ունակությանը՝ լիովին հարգելով անկախության, անկողմնակալության, անձնական անձեռնմխելիության, անձնական բարեվարքության, հավասարություն, ձեռնհասության և աշխատասիրություն հիմնական արժեքները[2]:

1. 1985 թվականին դատական իշխանության անկախության ապահովմանն օգնելու նպատակով ՄԱԿ-ն ընդունեց ***Դատական իշխանության անկախության հիմնական սկզբունքները***[3]: 20 սկզբունքներն ընդգրկում են (1) դատական իշխանության անկախությունը. (2) դատավորների խոսքի և հավաքների ազատությունը. (3) դատավորների որակավորումը, ընտրությունը և վերապատրաստումը. (4) դատավորների ծառայության և պաշտոնավարման

---

[1] Corruption and anti-corruption in the justice system / Cristi Danileţ. - Bucharest : Editura C.H. Beck, 2009, https://www.kas.de/c/document_library/get_file?uuid=efeb9a87-f5c0-6e14-78ef-e5708063bacb&groupId=252038.

[2] UNODC, Judicial Integrity; https://www.unodc.org/unodc/en/corruption/judicial-integrity.html.

[3] Basic Principles on the Independence of the Judiciary adopted 06 September 1985 BY the Seventh United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders held at Milan from 26 August to 6 September 1985, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/basic-principles-independence-judiciary.

պայմանները. (5) դատավորների մասնագիտական գաղտնիությունն ու անձեռնմխելիությունը. և (6) դատավորների կարգապահությունը, լիազորությունների կասեցումը և պաշտոնանկությունը:

2. Տասնհինգ տարի անց Դատավորների բարեվարքության խումբը[4], որի կազմում ընդգրկված են տարբեր երկրների գլխավոր դատավորները, Միջազգային դատարանի դատավորների մասնակցությամբ մշակեց ***դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքների[5] նախագիծը***: Այս սկզբունքները միաձայն հավանության են արժանացել 2003թ. ապրիլին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի նիստում: Բանգալորյան սկզբունքները բաղկացած են վեց արժեքներից, որոնք պետք է արտացոլվեն դատավորների վարքագծի ցանկացած կանոնագրքում՝ անկախություն, անկողմնակալություն, **բարեվարքություն**, պարկեշտություն, հավասարություն, ձեռնհասություն և ջանասիրություն: 3-րդ արժեքի իմաստը նկարագրվում է հետևյալ կերպ. «**Բարեվարքությունը կարևոր է դատական պարտականությունների պատշաճ կատարման համար: Դատավորը պետք է ապահովի, որ իր վարքագիծը անթերի լինի ողջամիտ դիտորդի տեսանկյունից: Դատավորի վարքագիծը պետք է հաստատի ժողովրդի հավատը դատական համակարգի ազնվության նկատմամբ: Արդարադատությունը պետք է ոչ միայն կատարվի, այլև տեսանելի լինի, որ կատարվում է**:»: Այդ ժամանակից ի վեր Բանգալորյան սկզբունքները հիմք են հանդիսացել դատավորների վարքագծի բազմաթիվ օրենսգրքերի համար և օգտագործվել են որպես ուղեցույց միջազգային մարմինների կողմից[6]:

3. ***Դատավորի վարքագծի բանգալորյան սկզբունքների մեկնաբանությունում[7]*** **բարեվարքությունը** բնորոշվում է որպես անմիջականության և արդարության հատկանիշ: **Բարեվարքության բաղադրիչներն են ազնվությունը և**

---

[4] https://judicialintegritygroup.org/.

[5]THE BANGALORE PRINCIPLES OF JUDICIAL CONDUCT: ECOSOC RESOLUTION 2006/23, https://www.unodc.org/ji/resdb/data/2006/_220_/the_bangalore_principles_of_judicial_conduct_ecosoc_resolution_200623.html?lng=en.

[6] https://judicialintegritygroup.org/impact-of-the-bangalore-principles.

[7] COMMENTARY ON THE BANGALORE PRINCIPLES OF JUDICIAL CONDUCT THE JUDICIAL INTEGRITY GROUP March 2007, https://judicialintegritygroup.org/images/resources/documents/BP_Commentary_Engl.pdf.

դատական բարոյականությունը: Դատավորը պետք է միշտ, ոչ միայն ծառայողական պարտականությունները կատարելիս, գործի ազնվորեն և դատավորի պաշտոնին համապատասխան ձևով, և զերծ լինի խարդախությունից, խաբեությունից և կեղծիքից, ինչպես նաև լինի լավ և առաքինի իր վարքով և բնավորությամբ: Գոյություն չունեն բարեվարքության աստիճաններ, ինչպես սահմանված են այս եղանակով: Բարեվարքությունը բացարձակ է: **Դատական համակարգում բարեվարքությունն ավելին է, քան առաքինությունը. դա անհրաժեշտություն է:**

4. Դատական բարեվարքության խմբի կողմից ընդունված ***Դատավորի վարքագծի բանգալոյան սկզբունքների արդյունավետ իրացման միջոցների***[8] 11.1-ին կետում նշվում է, որ դատական պաշտոնի համար ընտրված անձինք պետք է ունենան **բարեվարքություն** և արդյունավետություն, համապատասխան ուսուցում կամ որակավորում իրավունքի բնագավառում: 11.2-րդ կետը նախատեսում է, որ դատավորի թեկնածուի գնահատումը պետք է հաշվի առնել ոչ միայն նրա իրավական գիտելիքները և ընդհանուր մասնագիտական կարողությունները, այլև նրա սոցիալական իրազեկությունն ու զգայունությունը, ինչպես նաև այլ անձնական հատկություններ (ներառյալ էթիկայի զգացումը, համբերությունը, քաղաքավարությունը, ազնվությունը, ողջամտությունը, մարտավարությունը, համեստությունը և ճշտապահությունը) և հաղորդակցման հմտություններ: Թեկնածուի քաղաքական, կրոնական կամ այլ համոզմունքները կամ հակումները, բացառությամբ այն դեպքերի, երբ ապացուցված է, որ դրանք խանգարում են դատավորին կատարել դատական պարտականությունները, չպետք է նշանակություն ունենան:

5. 2006թ. հուլիսին ***ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի (ԷԿՈՍՈՍ)*** լիագումար նիստում միաձայն հաստատվեց անդամ պետությունների կողմից դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների ընդունման անհրաժեշտությունը: Այն կոչ է անում Անդամ պետություններին «դատական

---

[8] MEASURES FOR THE EFFECTIVE IMPLEMENTATION OF THE BANGALORE PRINCIPLES OF JUDICIAL CONDUCT (The Implementation Measures) Adopted by the Judicial Integrity Group at its Meeting held in Lusaka, Zambia 21 and 22 January 2010, https://judicialintegritygroup.org/images/resources/documents/BP_Implementation%20Measures_Engl.pdf.

մարմինների աշխատակիցների մասնագիտական և էթիկական վարքագծին վերաբերող կանոնները վերանայելիս կամ մշակելիս հաշվի առնել Բանգալորյան սկզբունքները»:

6. 2005 թվականին ***Դատավորների բարեվարքության խումբը (JIG)*** նույնպես պաշտոնապես ընդունեց ***Դատական անձնակազմի վարքագծի սկզբունքները***[9], որոնք կիրառելի են դատական ամբողջ անձնակազմի համար, ներառյալ, օրինակ, քարտուղարները:

7. Նույն թվականին ուժի մեջ մտավ ***Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան***[10]: Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան մանրամասն նկարագրում է այն գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն մասնակից պետությունների կողմից պետական կառույցներում և հասարակություններում կոռուպցիայի կանխարգելման և հետևանքների մեղմացման համար: Կոռուպցիայի դեմ կոնվենցիան ուղղակիորեն խնդիր է դնում «նպաստել պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսումը» (հոդված 1 (գ)) որպես իր նպատակներից մեկը: Այն կոչ է անում անդամ պետություններին «նպաստել, որ պաշտոնատար անձինք համապատասխան իրավասու մարմիններին հայտնեն իրենց գործառույթների իրականացման ժամանակ իրենց հայտնի դարձած կոռուպցիոն դեպքերի մասին» (8-րդ հոդվածի 4-րդ կետ) և «կարգապահական կամ այլ միջոցներ ձեռնարկել պետական պաշտոնյաների նկատմամբ, ովքեր խախտում են վարքագծի կանոնագրքերը կամ ստանդարտները» (8-րդ հոդվածի 6-րդ կետ):

Կոնվենցիայի 11.1-րդ կետում շարադրված է մասնակից պետությունների պարտավորությունը «**միջոցներ ձեռնարկելու դատական մարմինների աշխատակիցների շրջանում բարեվարքությունն ամրապնդելու և կոռուպցիայի հնարավորությունները կանխելու համար**»: Կոնվենցիայի 11.2-րդ կետը սահմանում է, որ այն դեպքերում, երբ դատախազությունն օգտվում է դատական համակարգին

[9] https://www.judicialintegritygroup.org/images/resources/documents/principles_court_personnel_en.pdf.
[10] https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/Convention/08-50026_E.pdf.

«համանման» անկախությունից, մասնակից պետությունները «կարող են» նրա նկատմամբ նախատեսել և կիրառել նմանատիպ միջոցներ:

8. ***Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդի «Դատավորների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին» 21 (2018) կարծիքում***[11] նշվում է. դատավորների շրջանում կոռուպցիան հասարակության և ժողովրդավարական պետության գործունեության հիմնական սպառնալիքներից մեկն է: Սա խաթարում է դատական համակարգի **բարեվարքությունը, որը հիմնարար նշանակություն ունի օրենքի գերակայության համար և հանդիսանում է Եվրոպայի խորհրդի հիմնական արժեքը**: Դատավորների բարեվարքությունը արդարադատության արդյունավետ, գործուն և անաչառ ազգային համակարգերի ստեղծման գլխավոր նախապայմանն է: **Այն սերտորեն կապված է դատական իշխանության անկախության հայեցակարգի հետ. վերջինս ապահովում է բարեվարքությունը, իսկ բարեվարքությունն ամրապնդում է անկախությունը**: Դատավորների բարեվարքությունն այս օրերին ավելի ու ավելի է կարևորվում դատական համակարգի վրա բազմաթիվ հարձակումների համատեքստում:

Ցավոք, կոռուպցիան շատ հաճախ իրականություն է մնում մի քանի անդամ պետություններում, ինչը խաթարում է հասարակության վստահությունը իրենց դատական համակարգի և, հետևաբար, իրենց քաղաքական համակարգի նկատմամբ Դատավորները կիսում են պատասխանատվությունը կոռուպցիան բացահայտելու և դրան արձագանքելու, ինչպես նաև դատավորների վարքագիծը վերահսկելու համար: ԵԴԽԽ-ը կենտրոնացել է դատավորների դիրքորոշման վրա, որպես իրենց դատական ներուժի մի մաս, դատական իշխանության կաշառքի փորձերի վերաբերյալ **դատավորների բարեվարքությունն ապահովելու ուղիների և կոռուպցիայի դեմ պայքարում դատավորների դերի վերաբերյալ** (2-3-րդ կետեր):

Կարծիքում նշվում է նաև, որ հստակ ապացույցներ կան, որ դատական համակարգը (ավանդաբար) թափանցիկության և բարեվարքության բարձր

[11] Opinion No. 21 "Preventing corruption among judges", https://www.coe.int/en/web/ccje/judicial-integrity-and-corruption.

աստիճանով ներկայացնում է լավագույն պաշտպանությունը կոռուպցիայից (13-րդ կետ):

Ընդգծվում է, որ **դատավորների շրջանում կոռուպցիայի կանխարգելման ամենակարևոր երաշխիքը, ըստ երևույթին, դատավորների բարեվարքության իսկական մշակույթի զարգացումն ու ամրապնդումն է**: (22-րդ կետ):

<u>Բ) Դատախազների և քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց մասով</u>

1. «***Բարեվարքությունը քրեական արդարադատության հաստատություններում (Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի 7-րդ, 8-րդ և 11-րդ հոդվածներ)» զեկույցում***[12] նշվում է, որ քրեական արդարադատության հաստատություններում բարեվարքության կարևորությունը լավ ընկալվում և գնահատվում է ամբողջ աշխարհում: Հայտնի է նաև, որ քրեական արդարադատության ուժեղ ինստիտուտներ պահպանելու համար բարեվարքությունն ամրապնդող միջոցառումները պահանջում են մշտական զգոնություն և ժամանակի ընթացքում իրականացում: Քրեական արդարադատության ինստիտուտների, այդ թվում՝ դատական համակարգի, դատախազության, ոստիկանության, քրեակատարողական ծառայությունների և դատարանների անձնակազմի բարեվարքության ապահովումը շարունակական գործընթաց է, որի նպատակն է կանխել կոռուպցիայի հնարավորությունները, ընդունել և իրականացնել մասնագիտական վարքագծի կանոններ և քրեական արդարադատության համակարգում ներառել ազնվության, օբյեկտիվության և արդարադատության հիմնարար հասկացությունները:

2. ***ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի ութերորդ կոնգրեսի կողմից ընդունված Դատախազների դերին***

---

[12] CAC/COSP/WG.4/2017/3 Integrity in criminal justice institutions (articles 7, 8 and 11 of the United Nations Convention against Corruption), https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/workinggroup4/2017-August-21-23/V1703962e.pdf.

վերաբերող ուղեցույցներում[13] նախատեսվում է, որ որպես դատախազ ընտրված անձինք պետք է լինեն **բարեվարք** և ունակ մարդիկ, ովքեր ունեն համապատասխան պատրաստվածություն և որակավորում:

2) <u>Բարեվարքության ստուգումը որպես բարեվարքության ապահովման մեխանիզմ</u>

1. ***Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդի «Դատավորների շրջանում կոռուպցիայի կանխարգելման մասին» 21 (2018) կարծիքում*** ԵԴԽԽ-ն ընդգծել է, որ դատավորների գնահատման համակարգը, որը ստեղծվել է պատշաճ կերպով, շատ արդյունավետ միջոց է առաջխաղացման որոշումներն ավելի օբյեկտիվ և հուսալի դարձնելու համար: Այն նաև նպաստում է ընդհանուր առմամբ դատական համակարգի թափանցիկության բարձրացմանը: Այս համատեքստում ԵԴԽԽ-ն հիշեցրել է դատավորների աշխատանքի գնահատման վերաբերյալ իր թիվ 17 (2014) եզրակացության մեջ շարադրված սկզբունքները՝ նշելով, որ **<u>կատարողականի գնահատման լավ համակարգը հաշվի է առնում նաև գնահատված դատավորի բարեվարքությունը</u>**: Սա տարբերվում է դատավորի կողմից կայացված անհատական որոշումների մանրակրկիտ ուսումնասիրությունից, քանի որ դա դատական իշխանության անկախության ակնհայտ խախտում կլիներ (29-րդ կետեր):

Միևնույն ժամանակ ԵԴԽԽ-ն խորհուրդ է տվել զերծ մնալ ստուգումներից, որոնք դուրս են գալիս թեկնածուի քրեական գրառումների և ֆինանսական վիճակի ընդհանուր ընդունված ստուգումներից: Այնուամենայնիվ, որոշ երկրներ իրականացնում են բարեվարքության շատ մանրակրկիտ ստուգումներ, որոնք ներառում են թեկնածուի անձնական, ընտանեկան և սոցիալական ծագումը: Այս ստուգումները սովորաբար իրականացվում են անվտանգության ծառայությունների կողմից: Այն երկրներում, որտեղ իրականացվում են նման ստուգումներ, դրանք պետք է իրականացվեն այնպիսի

[13] Guidelines on the Role of Prosecutors Adopted by the Eighth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Havana, Cuba, 27 August to 7 September 1990, https://www.ohchr.org/sites/default/files/prosecutors.pdf.

չափանիշների համաձայն, որոնք կարող են օբյեկտիվորեն գնահատվել: Դիմորդները պետք է իրավունք ունենան մուտք գործել ստացված ցանկացած տեղեկատվություն: Նման վերահսկողության հիման վրա մերժված թեկնածուն պետք է իրավունք ունենա բողոքարկել անկախ մարմին և այդ նպատակով հասանելիություն ունենա նման վերահսկողության արդյունքներին (26-րդ կետեր):

ԵԽԴԴ-ն կարծիքում եզրահանգել է, որ դատական համակարգում կոռուպցիայի արդյունավետ կանխարգելումը մեծապես կախված է համապատասխան երկրի քաղաքական կամքից՝ ապահովելու ինստիտուցիոնալ, ենթակառուցվածքային և կազմակերպչական այլ երաշխիքներ՝ կարևորելով, որ **դատավորների շրջանում կոռուպցիայի կանխարգելման ամենակարևոր երաշխիքը, ըստ երևույթին, դատավորների բարեվարքության իսկական մշակույթի զարգացումն ու ամրապնդումն է** (եզրահանգումներ, «դ» կետ):

2. ***Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի տեխնիկական ուղեցույցը***, որը պատրաստվել է Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) կողմից Միավորված ազգերի կազմակերպության հանցավորության և արդարադատության միջտարածաշրջանային հետազոտական ինստիտուտի (UNICRI) հետ համատեղ, 50-րդ գլխում նշում է **բարեվարքության ստուգումը որպես կոռուպցիայի դեմ պայքարի առկա գործիքներից մեկը և նկարագրում է այն հետևյալ կերպ. «մեթոդ, որը նպաստում է ինչպես կոռուպցիայի կանխարգելմանը, այնպես էլ դրա համար դատական հետապնդմանը և իրեն ապացուցել է որպես կոռուպցիայի զսպման չափազանց արդյունավետ միջոց»**[14]:

3. ***ՏՀԶԿ-ի «Հանրային հատվածում շահերի բախման կառավարում» ուղեցույցում*** նշվում է, որ «**բարեվարքության ստուգումը կարող է հզոր մասնագիտացված գործիք լինել կոռուպցիայի բացահայտման համար**»[15]:

---

[14] UNODC (2009), Technical Guide to the UNCAC, Article 50 II.4.5., https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/TechnicalGuide/09-84395_Ebook.pdf.

[15] OECD (2005), *Managing Conflict of Interest in the Public Sector*, էջ 68 ("Integrity Testing Policy"). https://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf.

4. *ԵԱՀԿ «Կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն պրակտիկայում»* նշվում է, որ. «**Բարեվարքության ստուգումը ներկայումս դարձել է հատկապես օգտակար գործիք ոստիկանության կոռումպացված աշխատակիցներին հայտնաբերելու և նրանց մաքուր պահելու համար**»[16]:

5. ***Համաշխարհային բանկի «Կոռուպցիայի կանխարգելումը դատախազության մարմիններում. ըմբռնում և կառավարում բարեվարքությունն ապահովելու նպատակով» ուղեցույցում*** նշվում է **բարեվարքության ստուգումը որպես «կոռուպցիայի հայտնաբերման հզոր գործիք»**[17]:

6. 2000 թվականին ***Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդունեց «Պետական պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ» № R (2000) 10 հանձնարարականը***: Հանձնարարականին կից Պետական պաշտոնատար անձանց վարքագծի օրինակելի կանոնագիրքը նպատակ ուներ «սահմանել բարեվարքության և վարքագծի չափանիշներ, որոնք պետք է պահպանվեն պետական պաշտոնյաների կողմից, որպեսզի օգնեն նրանց համապատասխանել այդ չափանիշներին և հասարակությանը տեղեկացնել այն վարքագծի մասին, որը նա իրավունք ունի ակնկալել պետական պաշտոնյաներից» (հոդված 3): Կանոնագրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «պետական ծառայողը պարտավոր է իրեն մշտապես պահել այնպես, որ պահպանվի և ամրապնդվի հանրային վստահությունը հանրային ծառայության բարեվարքության, անկողմնակալության և արդյունավետության նկատմամբ»:

Հանձնարարականի 24-րդ հոդվածում քննարկվում է բարեվարքության ստուգումների հարցը: Այն սահմանում է, որ «**պետական պաշտոնյան, որը պատասխանատու է նշանակման, առաջխաղացման կամ պաշտոնավարման համար, պետք է ապահովի, որ թեկնածուի բարեվարքության համապատասխան ստուգումներն իրականացվեն օրենքի պահանջներին համապատասխան**» (կետ 1)՝

---

[16] OSCE (2004), *Best practices in combating corruption*, (English and Russian), Chapter 12, էջ 141 ("Integrity testing").

[17] Gramckow H. (2011), *Preventing Corruption in Prosecution Offices: Understanding and Managing for Integrity*, Justice&Development Working Paper Series, No. 15/2011, էջ 11.

հավելելով, որ «եթե որևէ նման ստուգման արդյունքը նրա համար անորոշություն է առաջացնում, թե ինչպես վարվել» (1-ին կետ 2) «նա պետք է դիմի համապատասխան խորհրդատվության համար» (կետ 2):

Հանձնարարականի բացատրական գրության[18] մեջ ընդգծվում է, որ «հանրային ծառայությունը պետական պաշտոնյաներից պահանջում է բարեվարքություն», և բացահայտորեն նշվում է, որ «**փորձը ցույց է տալիս բարեվարքության ստուգումներ անցկացնելու կամ դրանց համապատասխան գործողություններ ձեռնարկելու կարևորությունը՝ պետական ծառայության բարեվարքության երկարատև խնդիրներից խուսափելու համար**»:

7. *«Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով)* դիտարկել է ազգային միջոցառումների երեք ենթակատեգորիաներ՝ (i) որոշակի պաշտոնի համար թեկնածուների «նախնական վեթթինգը», (ii) բարեվարքության ստուգումները, որոնք անցկացվում են ավելի կանոնավոր կերպով (օրինակ՝ գույքի հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն), (iii) վեթթինգի լիարժեք ընթացակարգեր[19]:

Խորվաթիայի մասով անդրադառնալով վեթթինգի իրականացմանը՝ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը կարծիք է հայտնել, որ արդեն իսկ գոյություն ունեցող մեխանիզմների ամրապնդումն ու կատարելագործումը, օրինակ՝ գույքի հայտարարագրերի թափանցիկության/մատչելիության առումով, որոնք, ըստ Խորվաթիայի իշխանության, անբավարար են եղել, և կարգապահական վարույթների հարուցումը, ակնհայտորեն նախընտրելի է որպես բարեփոխումների առավել համաչափ ճանապարհ: Հետևաբար, հանձնաժողովը խորհուրդ է տվել Խորվաթիայի իշխանություններին վերանայել իրենց մոտեցումը բոլոր դատավորների անվտանգության պարբերական վեթթինգ նշանակելու հարցում և **մշակել**

---

[18] COUNCIL OF EUROPE COMMITTEE OF MINISTERS EXPLANATORY MEMORANDUM to Recommendation Rec(2000)10 on Codes of conduct for public officials (Adopted by the Committee of Ministers on 11 May2000, at the 106th session), https://rm.coe.int/1680534424.

[19] CDL-AD(2022)011 Kosovo - Opinion on the Concept Paper on the Vetting of Judges and Prosecutors and draft amendments to the Constitution, 14.

դատավորների բարեվարքության ապահովման այլընտրանքային ռազավարություն՝ հիմնված գոյություն ունեցող այլ մեխանիզմների վրա[20]:

Մեկ այլ կարծիքում Վենետիկի հանձնաժողովը կարևորել է. «**Բարեվարքության ստուգումները բացառիկ գործիք են, որոնք օգնում են ստուգել և ամրապնդել պետական պաշտոնյաների մասնագիտական և բարոյական բարեվարքությունը**: Դրանք երբեք չպետք է ծառայեն որպես փոխարինող քրեական հետաքննություններին կամ զտման միջոցառումներին»[21]:

Միևնույն ժամանակ, բարեվարքության ստուգումների և վեթթինգի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել բարեվարքության ստուգումների վերաբերյալ հանձնաժողովի հետևյալ հիմնական մոտեցումները.

ա) Բարեվարքության ստուգմանը և քրեական հանցագործությունների քննությանը ծառայում են տարբեր նպատակների և ունեն տարբեր ընթացակարգային և իրավական առանձնահատկություններ: Քրեական հետաքննությունը հարուցվում է քրեական հանցագործություն կատարելու փաստը հաստատելու համար, մինչդեռ **բարեվարքության ստուգումը նպատակ ունի բացահայտել ապագայում անպատշաճ վարքի ռիսկը կամ հավանականությունը**: Կարևորն այն է, որ ապացուցման բեռը և ապացուցման չափանիշը հաճախ տարբեր կլինեն: Քրեական հետաքննությունները նպատակ ունեն հաստատել մի փաստ, որը ողջամիտ կասկած չի հարուցում, ինչը նշանակում է, որ ապացուցման բեռը ընկնում է պետության վրա: Այլ հետաքննություններում, ինչպիսին է՝ բարեվարքության ավելի լայն ստուգումը, ապացույցների բեռը դրվելու է հավանականության հավասարակշռության վրա[22]:

բ) Բարեվարքության նախնական ստուգումների համակարգում թեկնածուին աշխատանքի չընդունելու որոշումը կարող է հիմնավորվել ռիսկի գնահատման հիման

[20] CDL-AD(2022)005 Croatia - Opinion on the Introduction of the Procedure of Renewal of Security Vetting Through Amendments to the Courts Act, 20.

[21] CDL(2015)046-e, Draft Interim Opinion on the Draft Law on Integrity Checking of Ukraine, § 89, https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2015)046-e:

[22] CDL-AD(2022)011 Kosovo - Opinion on the Concept Paper on the Vetting of Judges and Prosecutors and draft amendments to the Constitution, 9.

վրա պարզ կասկածի դեպքում: Այնուամենայնիվ, գործող **աշխատակցին բացասաբար գնահատելու որոշումը պետք է կապված լինի անպատշաճ վարքի ցուցիչի հետ**, ինչպիսին է՝ անբացատրելի հարստությունը, նույնիսկ եթե հնարավոր չէ միանշանակ ապացուցել, որ այդ հարստությունն իսկապես ստացվել է ապօրինի աղբյուրներից[23]:

գ) Շատ կարևոր է, որ բարեվարքության ստուգումը հստակ տարանջատվի դատավորի մասնագիտական կարողությունների գնահատումից, նույնիսկ եթե երկու գործընթացներն էլ կարող են նշանակություն ունենալ աշխատանքի ընդունման կամ գնահատման ժամանակ: Մասնագիտական կարողությունների պակասը հնարավոր է վերացնել վերապատրաստման միջոցով, բայց դա ակնհայտորեն պատճառ է հանդիսանում մարդուն աշխատանքի չընդունելու համար[24]:

դ) Այն փաստը, որ բարեվարքության ստուգումներն իրականացվելու են ոչ թե դատական իշխանության և դատախազության ինքնակառավարման մարմինների կողմից, այլ արտաքին մարմնի կողմից, որը կձևավորվի Մոլդովայի Հանրապետության «զարգացման գործընկերների» և խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության կողմից, պահանջում է, որ առավելագույն ուշադրություն դարձվի իշխանությունների տարանջատման և զսպումների և հակակշիռների սահմանադրական սկզբունքների պահպանմանը[25]:

ե) Բարեվարքության ստուգումները պետք է իրականացվեն իրավասու, անկախ և անկողմնակալ մարմինների կողմից և չեն կարող օգտագործվել որպես գործիք քաղաքականապես «անցանկալի» դատավորներին վերացնելու համար[26]:

---

[23] CDL-AD(2022)011 Kosovo - Opinion on the Concept Paper on the Vetting of Judges and Prosecutors and draft amendments to the Constitution, 10.

[24] CDL-AD(2022)011 Kosovo - Opinion on the Concept Paper on the Vetting of Judges and Prosecutors and draft amendments to the Constitution, 11.

[25] CDL-AD(2021)046 Republic of Moldova - Joint Opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of the Council of Europe on some measures related to the selection of candidates for administrative positions in bodies of self-administration of judges and prosecutors and the amendment of some normative acts, 16.

[26] CDL-AD(2020)038-e Ukraine - Urgent Joint Opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of the Council of Europe on the Legislative Situation regarding anti-corruption mechanisms, following Decision N° 13-R/2020 of the Constitutional Court of Ukraine, issued pursuant to Article 14a of the Venice Commission's Rules of Procedure on 9 December 2020, endorsed by the Venice Commission on 11 December 2020 at its 125th online Plenary Session (11-12 December 2020), 37.

ԵԴԽԽ-ն նշում է. «Դատավորների պաշտոնական անհատական գնահատականը պետք է հիմնված լինի իրավասու դատական մարմնի կողմից հրապարակված օբյեկտիվ չափանիշների վրա: Օբյեկտիվ չափանիշները պահանջվում են ոչ միայն քաղաքական ազդեցությունը բացառելու համար, այլ նաև այլ պատճառներով, օրինակ՝ ֆավորիտիզմի, պահպանողականության և նեպոտիզմի հնարավոր տպավորության ռիսկից խուսափելու համար, որը տեղի է ունենում, եթե նշանակումները/գնահատումները կատարվում են ոչ կառուցվածքային կամ անձնական առաջարկությունների հիման վրա: Այս օբյեկտիվ չափանիշները պետք է հիմնված լինեն արժանիքների վրա՝ հաշվի առնելով որակավորումը, բարեվարքությունը, կարողությունները և արդյունավետությունը[27]:

զ) (...) Պետք է ընդգծել, որ սովորական ընթացակարգերի համաձայն, բարեվարքության պահանջները չպահպանելը հանգեցնում է կարգապահական տույժի, այլ ոչ թե փոխադրման: Հաշվի առնելով, որ Մոլդովան այն երկրներից է, որտեղ դատական համակարգում առկա փաստացի և/կամ ենթադրյալ կոռուպցիան լուրջ մտահոգություն է առաջացնում հանրության շրջանում, այս բավականին անորոշ դրույթը սխալ ազդանշան է ուղարկում դատական համակարգի բոլոր մակարդակներում դատավորների բարեվարքության մշակույթի ապահովման և ամրապնդման համար անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկելու քաղաքական կամքի վերաբերյալ: Այսպիսով, Վենետիկի հանձնաժողովն ու Տնօրինությունն այն կարծիքին են, որ դատավորի բարեվարքության վերաբերյալ Գնահատող հանձնաժողովի բացասական հաշվետվությունը պետք է հանգեցնի Բարձրագույն խորհրդի կողմից կարգապահական տույժի կիրառմանը: Տույժի ծանրությունը պետք է կախված լինի կարգապահական իրավախախտման ծանրությունից: Փոխադրում չպետք է առաջարկվի, երբ խոսքը վերաբերում է բարեվարքության խախտումներին:

[27] Opinion No.17 "On evaluation of judges' work, the quality of justice and judicial independence" the Consultative Council of European Judges; https://rm.coe.int/16807481ea

Իրավիճակն ակնհայտորեն տարբերվում է պրոֆեսիոնալության գնահատականին չհամապատասխանելու դեպքում[28]:

3) <u>Համեմատական փորձը բարեվարքության ամրապնդմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ</u>

Ա) Ընդհանուր պետական համակարգում

Ազգային մակարդակում գաղտնի գործողությունների միջոցով բարեվարքության ստուգումների կարգավորումը երկար ավանդույթ ունի ընդհանուր իրավունքի երկրներում, ինչպիսիք են՝ **Միացյալ Թագավորությունը, Միացյալ Նահանգները կամ Ավստրալիան**, քրեական իրավունքի համատեքստում[29]: Այդ երկրներում ընդհանուր իրավասության դատարանները և բարձր ատյանները մշակել են հարուստ նախադեպային պրակտիկա[30]: Այս մեթոդը սկսվել է օգտագործվել մայրցամաքային իրավական համակարգի երկրներում, ինչպիսիք են՝ **Չեխիան, Հունգարիան կամ Ռումինիան**: Դրա ներդրումը առաջացրեց գիտական բանավեճ[31], ինչպես նաև ժամանակ առ ժամանակ վիճարկվեց սովորական կամ սահմանադրական

---

[28] CDL-AD(2019)020 Republic of Moldova - Interim Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of the Council of Europe on the Draft Law on the Reform of the Supreme Court of Justice and the Prosecutor's Office, 16, CDL-AD(2021)046 Republic of Moldova - Joint Opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI) of the Council of Europe on some measures related to the selection of candidates for administrative positions in bodies of self-administration of judges and prosecutors and the amendment of some normative acts, 39.

[29] Marcus, Paul: *The Entrapment Defence,* 4th edition, Michie, 1992; Chernok, Adam V.: Entrapment under controlled operations legislation: A Victorian perspective, *Criminal Law Journal,* Vol. 35, 2011, էջեր 361-375; Spencer, J. R.: Entrapment and the European Convention on Human Rights, *Cambridge Law Journal,* 2001, էջեր 30-33.

[30] UK House of Lords, *Regina v Loosely,* 25 October 2001; US Court of Appeals, District of Columbia Circuit, *United States v. Kelly,* 748 F.2d 691 (1984); *Jacobson v. United States,* 503 U.S. 540, 548 (1992); *Mathews v. United States,* 485 U.S. 58, 63 (1988).

[31] Roibu, Magdalena: Entrapment in Case of Corruption Offenses – Breach of the Right to a Fair Trial, *Journal of Eastern European Criminal Law*, No. 2, 2014, էջեր 93-100; Puşcaşu, Volcu: Agenţi sub acoperire. Provocarea ilegală a infracţiunii. Consideraţii (I), *Caiete de Drept Penal,* No. 2, 2010, էջեր 29-74; Puşcaşu, Volcu: Agenţi sub acoperire. Provocarea ilegală a infracţiunii. Consideraţii (II), *Caiete de Drept Penal,* No. 3, 2010, էջեր 75-98.

դատարաններում[32]: Կրկին, ստուգումները հիմնականում ծառայում են քրեական իրավունքի նպատակներին: Ընդհանուր իրավունքի երկրներում ստուգումները, ներառյալ ընտրովի ստուգումները, օգտագործվել են նաև ոստիկանությունում՝ աշխատակիցների բարոյական բարեվարքությունը ստուգելու համար:

Հակակոռուպցիոն օրենսդրության շրջանակներում բարեվարքության ստուգումներ ներդրվել են **Ռումինիայում** (օրինակ, ներքին գործերի նախարարության աշխատակիցների համար)[33] և **Մոլդովայի Հանրապետությունում** (ընդհանուր առմամբ քաղաքացիական ծառայողների համար)[34]:

Բ) Դատավորների, դատախազների և քննիչների մասով

Ալբանիայի Հանրապետության «Կազմակերպված հանցավորության դեմ Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության կազմակերպման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հետաքննության ազգային բյուրոյի բոլոր քննիչները պարտավոր են ամեն երկու տարին մեկ իրենց նշանակման կամ վերանշանակման առնչությամբ պատասխանել վերջիններիս բարեվարքությանը վերաբերող որոշակի հարցադրումների: Վերոնշյալ հարցադրումները իրականացվում են ստի դետեկտորի միջոցով, որի ուսումնասիրության արդյունքում կայացված եզրակացությունը ունի վճռորոշ նշանակություն քննիչի նշանակման կամ վերանշանակման առնչությամբ: [35]

«Քննիչ» հասկացությունը սահմանված է **Ուկրաինայի** Քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում.

---

[32] Constitutional Court of the Czech Republic No. 597/99 of 22 June 2000 and No. 407/07 of 29 October 2009.

[33] Romania, Law 38/2011 on modifying the Emergency Government Ordinance No. 30/2007 on the organization and functioning of the Ministry of internal Affairs (Article 17) and the Ministry of Internal Affairs Order No. 256/2011 on the procedure for testing the professional integrity of the Ministry of Internal Affairs staff.

[34] Republic of Moldova, Law No. 325 of 23 December 2013 on Professional Integrity Testing. CDL-REF(2014)041.

[35] https://track.unodc.org/uploads/documents/BRI-legal-resources/Albania/1_-Albania_Law_on_the_Organization_and_Functioning_of_Institutions_for_Combating_Corruption_and_Organized_Crime.pdf

Քննիչը հանդիսանում է Ազգային ոստիկանության, անվտանգության մարմնի, Հետաքննության պետական բյուրոյի, Ուկրաինայի տնտեսական անվտանգության բյուրոյի, Դետեկտիվների գլխավոր ստորաբաժանման, դետեկտիվների ստորաբաժանման, դետեկտիվների բաժնի, Ուկրաինայի Ազգային հակակոռուպցիոն բյուրոյի ներքին հսկողության ստորաբաժանման պաշտոնատար անձ, որը լիազորված է սույն օրենսգրքով նախատեսված իրավասության սահմաններում իրականացնել քրեական իրավախախտումների մինչդատական քննություն[36]: Հետևաբար, քննիչների, որպես վերը նշված մարմինների պաշտոնատար անձանց բարեվարքության ստուգումը կարգավորվում է տարբեր օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով:

«Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 17-1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության ներքին վերահսկողության ստորաբաժանումը Ազգային գործակալության ղեկավարի սահմանած կարգով ստուգումներ է անցկացնում Ազգային գործակալության աշխատակիցների բարեվարքության վերաբերյալ և վերահսկում նրանց ապրելակերպը:[37]

Վերոգրյալի հետ կապված՝ թիվ 595/20 Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության հրամանով 2020 թվականի դեկտեմբերի 24-ին հաստատվել է «Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության աշխատակիցների բարեվարքության ստուգման և ապրելակերպի մոնիթորինգի իրականացման մասին» կարգը:[38] Ազգային գործակալությունում պաշտոն ստանձնելիս անձը տեղեկացվում է բարեվարքության ստուգում անցնելու հնարավորության մասին և համաձայնություն է հայտնում Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությանը բարեվարքության ստուգման և կենսակերպի մոնիթորինգի հնարավորության վերաբերյալ (Հավելված 1): Յուրաքանչյուր աշխատակից Ազգային գործակալությունում պաշտոն ստանձնելուց հետո 10-օրյա ժամկետում, ինչպես նաև ամեն տարի մինչև ապրիլի 1-ը Ներքին

[36] https://zakon.rada.gov.ua/laws/show/4651-17#Text
[37] https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18#Text
[38] https://zakon.rada.gov.ua/rada/show/v0595884-20#Text

վերահսկողության վարչություն է ներկայացնում Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության աշխատակցի բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը (Հավելված 2) (այսուհետ՝ Հարցաթերթիկ): Աշխատակիցների կողմից ներկայացված Հարցաթերթիկները ենթակա են գրանցման Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության աշխատակիցների բարեվարքության հարցաթերթիկների գրանցամատյանում (Հավելված 3), որը վարում է Ազգային գործակալության ներքին վերահսկողության վարչությունը՝ էլեկտրոնային եղանակով:

2021 թվականի նոյեմբերի 19-ին թիվ 19 Ուկրաինայի տնտեսական անվտանգության բյուրոյի հրամանով հաստատվել է «Ուկրաինայի տնտեսական անվտանգության բյուրոյի աշխատակիցների բարեվարքության ստուգման և կենսակերպի մոնիթորինգի իրականացման մասին» կարգը:[39] Սույն Կարգը սահմանում է Տնտեսական անվտանգության բյուրոյում համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից աշխատակիցների բարեվարքության ստուգման և կենսակերպի մոնիտորինգի անցկացման կարգը, որը որոշվում է Տնտեսական անվտանգության բյուրոյի հրամանով: Համաձայն սույն Կարգի, բարեվարքության ստուգումը լիազորված ստորաբաժանման կողմից իրականացվող միջոցառումների շարք է, որը կազմված է աշխատակցի բարոյական, բիզնես և մասնագիտական որակների մասին վկայող տվյալների հավաքագրումից, վերլուծությունից և ստուգումից: Սույն Կարգի 2-րդ բաժնի 3-րդ կետի համաձայն՝ Տնտեսական անվտանգության բյուրոյում պաշտոնի նշանակվելուց հետո անձը նախազգուշացվում է բարեվարքության ստուգման և կենսակերպի մոնիտորինգ անցկացնելու հնարավորության մասին և համաձայնություն է տալիս կատարել բարեվարքության ստուգում և կենսակերպի մոնիտորինգ՝ սույն Կարգի հավելված 1-ում նշված ձևով: Յուրաքանչյուր աշխատակից Տնտեսական անվտանգության բյուրոյում նշանակվելուց հետո տասն օրվա ընթացքում, ինչպես նաև ամեն տարի մինչև ապրիլի 1-ը, լիազորված ստորաբաժանում է ներկայացնում Ուկրաինայի տնտեսական անվտանգության բյուրոյի աշխատակցի բարեվարքության լրացված հարցաթերթիկը (այսուհետ՝ Հարցաթերթիկ) սույն Կարգի

[39] https://zakon.rada.gov.ua/laws/show/z0094-22#Text

հավելված 2-ում տրված ձևով: Լիազոր ստորաբաժանման ղեկավարը ապահովում է բարեվարքության ստուգման իրականացումը: Բարեվարքության ստուգման արդյունքները փաստաթղթավորվում են լիազորված ստորաբաժանման ղեկավարին հասցեագրված հուշագրում: «Ուկրաինայի Ազգային հակակոռուպցիոն բյուրոյի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Ազգային բյուրոյի ներքին վերահսկողության ստորաբաժանումը կատարում է Ազգային բյուրոյի աշխատակիցների բարեվարքության ստուգումները և ապրելակերպի մոնիտորինգը:[40]

Ուկրաինայի «Հանրային դատախազության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Գլխավոր դատախազը, մարզային և կառուցվածքային ստորաբաժանումների դատախազները տարեկան կտրվածքով պարտավորվում են բարեվարքության վերաբերյալ գաղտնի թեստ լրացնել, որն իրականացնում է Դատախազության ներքին անվտանգության ստորաբաժանումը: Դատախազների բարեվարքության ուսումնասիրության առավել մանրամասները սահմանված են օրենքի 32-րդ հոդվածում:[41]

Չեխիայի Հանրապետության գլխավոր դատախազությունը ընդունել է իր ներքին հակակոռուպցիոն քաղաքականությունը 2018 թվականին՝ որպես ինստիտուցիոնալ պատասխանների մաս՝ ուղղված ավելի լայն ազգային ռազմավարական փաստաթղթերին: Քաղաքականության ընդհանուր նպատակն է բացահայտել ռիսկային ոլորտները և համապատասխան մեխանիզմները դրանց վերահսկման և մեղմացման համար, ինչպես նաև ապահովել ներքին միջոցառումների վերանայումն ու կատարելագործումը, փաստաթուղթը կենտրոնանում է հետևյալ առաջնահերթ ոլորտների վրա: Այդ նպատակների ներքո, ի թիվս այլնի, սահմանված է հակակոռուպցիոն մթնոլորտի ստեղծումը և ամրապնդումը, ներքին հակակոռուպցիոն քաղաքականության գնահատում և բարելավում, կոռուպցիոն կասկածելի դեպքերի արդյունավետ ընթացակարգերի ապահովում, ներքին հակակոռուպցիոն գնահատում և

[40] https://zakon.rada.gov.ua/laws/show/1698-18#Text
[41] https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2014)047-e

բարելավում, որոնց շրջանակում ստուգումներ են իրականացվում, խնդիրների դեպքում՝ գնահատումներ:[42]

Սլովենիան հայտարարել է, որ գործող օրենսդրությունը պահանջում է, որ ամբողջ երկրում յուրաքանչյուր դատարան և դատախազները մշակեն և իրականացնեն բարեվարքության ծրագիր, որը, ի թիվս այլնի, նախանշում է աշխատանքի ընդունման և առաջխաղացման կոռուպցիայի կանխարգելման միջոցառումները:

Չեխիայում մշակվել է կոռուպցիայի դեմ պայքարի ներքին ծրագիր, որը նախատեսում է դատախազներին ռեսուրսների հատկացում և կոռուպցիայի կանխարգելման համար ներքին հսկողության և կառավարման մեխանիզմների ստեղծում:

Ռումինիայում մագիստրատի (դատավոր, դատախազ) համար պարբերաբար անցկացվում են կատարողականի գնահատումներ, և առաջխաղացումը կախված է ինչպես ծառայության տևողությունից, այնպես էլ որոշակի մակարդակի հասնելուց՝ դրական ծառայողական գնահատման համար: Բացի այդ, ինչպես դատավորները, այնպես էլ դատախազները ենթարկվում են իրենց արդյունավետության, աշխատանքի որակի և բարեվարքութան պարբերական գնահատման, որն իրականացվում է երեք տարին մեկ անգամ Մագիստրատի բարձրագույն խորհրդի կողմից:

Չինաստանում դատավորներն ու դատախազները ենթարկվում են կանոնավոր ստուգումների և ծառայողական գործունեության գնահատման՝ բարեվարքությունն ու արդյունավետությունն ապահովելու համար:

Սաուդյան Արաբիայում դատավորները պարբերաբար ստուգվում են Բարձրագույն դատական խորհրդի իրավասության ներքո գտնվող դատական տեսչության դեպարտամենտի կողմից: Տեսչությունը քննում է արդյունավետությանը, ձեռնհասությանը և բարեվարքությանը վերաբերող հարցեր և գնահատական է տալիս ստուգվող դատավորին:

Սերբիայում «Կոռուպցիայի դեմ պայքարի գործակալության մասին» օրենքի համաձայն՝ բոլոր պետական հաստատությունները, ներառյալ դատական համակարգը,

[42] https://www.oecd-ilibrary.org/sites/cf6bbd5d-en/index.html?itemId=/content/component/cf6bbd5d-en

պարտավոր են իրականացնել հաստատության կոռուպցիայի և ոչ էթիկական վարքագծի ռիսկի ազդեցության վերաբերյալ ինքնագնահատում և մշակել բարեվարքության ծրագիր՝ բացահայտված ռիսկերը վերացնելու համար: Այս միջոցառման առաջին շրջափուլին մասնակցել է արդարադատության ոլորտի հաստատությունների 84 տոկոսը և մշակել անկաշառության ապահովման ծրագրեր, այդ թվում՝ դատախազությունները, դատարանները և քրեական արդարադատության այլ հաստատությունները[43]:

Դատավորների բարեվարքության ստուգման կապակցությամբ բավականին մանրամասն կարգավորումներ են նախատեսված **Ուկրաինայում** և **Մոլդովայում**:

Ուկրաինայի «Դատավորի կարգավիճակի և դատական համակարգի մասին» Ուկրաիայի օրենքի[44]՝ դատավորի իրավունքները և պարտականությունները սահմանող 56-րդ հոդվածի 7-րդ մասի 2-3-րդ կետերը սահմանում են, որ դատավորը պարտավոր է պահպանել դատական էթիկայի կանոնները, մասնավորապես, դրսևորել և պահպանել վարքագծի բարձր չափանիշներ ցանկացած գործունեության մեջ՝ դատարանի նկատմամբ հանրային վստահության ամրապնդման և դատավորների ազնվության և բարեվարքության նկատմամբ հանրային վստահության ապահովման նպատակով, ներկայացնել դատավորի բարեվարքության հայտարարագիր և դատավորի ընտանեկան հարաբերությունների հայտարարագիր:

Օրենքի 62-րդ հոդվածը կարգավորում է դատական բարեվարքության հայտարարագրի հետ կապված հարցերը: Մասնավորապես, հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է ամեն տարի մինչև փետրվարի 1-ը ներկայացնել Ուկրաինայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից որոշված ձևով

---

[43] Open-ended Intergovernmental Working Group on the Prevention of Corruption Vienna, 21-23 August 2017 Item 2 (a) (ii) of the provisional agenda* Implementation of Conference resolution 6/6, entitled "Follow-up to the Marrakech declaration on the prevention of corruption", and of the recommendations agreed upon by the Working Group at its meeting held in August 2016: good practices and initiatives in the prevention of corruption: integrity in criminal justice institutions (articles 7, 8 and 11, of the United Nations Convention against Corruption), https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/workinggroup4/2017-August-21-23/V1703962e.pdf .

[44]«Դատարանակազմության և դատավորների կարգավիճակի մասին» օրենքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2021)080-e.

բարեվարքության մասին հայտարարագիր՝ այն լրացնելով հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Դատավորի բարեվարքության մասին հայտարարագիրը պետք է պարունակի այն հայտարարությունների ցանկը, որոնց ճշմարտացիության մասին դատավորը պետք է հայտարարի դրանք հաստատելով կամ չհաստատվելով:

Դատավորի բարեվարքության մասին հայտարարագիրը պետք է պարունակի դատավորի ազգանունը, անունը, հայրանունը, աշխատանքի վայրը, պաշտոնը և հետևյալ հայտարարությունները՝

1) դատավորի կենսամակարդակի համապատասխանությունը դատավորի ու նրա ընտանիք սեփականության ներքո գտնվող գույքին և ի ստացած եկամուտներին.

2) պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթների իրականացման համար լիազորված անձի կողմից հայտարարագրերը ժամանակին և ամբողջական ներկայացնելը և դրանցում հայտարարագրված տվյալների հավաստիությունը,

3) կոռուպցիայի հետ կապված հանցագործություններ կատարելուն առնչություն չունենալը.

4) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի բացակայությունը.

5) դատավորի պարտականությունները բարեխղճորեն կատարելը և երդումը պահպանելը.

6) այլ դատավորների կողմից իրականացվող արդարադատությանը չմիջամտելը.

7) «Ուկրաինայում դատական համակարգի նկատմամբ վստահությունը վերականգնելու մասին» Ուկրաինայի օրենքին համապատասխան դատավորների ստուգում անցնելը և դրա արդյունքները.

8) «Իշխանությունը մաքրելու մասին» Ուկրաինայի օրենքով սահմանված արգելքների բացակայություն: Դատավորների բարեվարքության մասին հայտարարագիրը կարող է պարունակել դատավորների բարեվարքության ստուգմանն ուղղված այլ հայտարարություններ:

Դատավորների բարեվարքության մասին հայտարարագիրը հրապարակային է դառնում՝ հրապարակելով այն Ուկրաինայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Եթե այլ բան ապացուցված չէ, դատավորների բարեվարք լինելու մասին հայտարարագրում դատավորի հայտարարությունները համարվում են արժանահավատ:

Այնպիսի տեղեկատվություն ստանալու դեպքում, որը կարող է վկայել դատավորի կողմից դատավորների բարեվարքության մասին հայտարարագրում ներկայացված տվյալների անարժանահավատության (այդ թվում՝ թերի լինելու) մասին, Ուկրաինայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովը ստուգում է նշված հայտարարագիրը:

Դատավորի կողմից դատավորի բարեվարք լինելու մասին հայտարարագիր չներկայացնելը, ժամանակին չներկայացնելը կամ ակնհայտ անարժանահավատ (այդ թվում՝ թերի) տվյալներ ներկայացնելն առաջացնում է սույն օրենքով նախատեսված կարգապահական պատասխանատվություն:

Օրենքի 83-րդ հոդվածի համաձայն՝ որակավորումների գնահատումն իրականացվում է Ուկրաինայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից համապատասխան դատարանում արդարադատություն իրականացնելու համար դատավորի (դատավորի թեկնածուի) կարողությունը որոշելու համար օրենքով սահմանված չափանիշներին համապատասխան:

Որակավորումների գնահատման չափանիշները պետք է լինեն՝

1) ձեռնհասությունը (մասնագիտական, անձնական, սոցիալական և այլն),

2) մասնագիտական էթիկան և

3) բարեվարքությունը:

Դատավորի որակավորման գնահատման հիմքերն են՝ դատավորի (դատավորի թեկնածուի) հայտարարությունը որակավորման գնահատում անցնելու մասին, ներառյալ մրցույթին մասնակցելը, Ուկրաինայի դատավորների Բարձրագույն

որակավորման հանձնաժողովի որոշումը օրենքով նախատեսված դեպքերում դատավորի որակավորման գնահատում իրականացնելու մասին:

Որակավորման գնահատման կարգը և մեթոդաբանությունը, որակավորման գնահատման չափանիշներին համապատասխանության ցուցանիշները և դրանց որոշման միջոցները սահմանվում են Ուկրաինայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից:

Որակավորման գնահատումը պետք է իրականացվի թափանցիկ և հրապարակային, գնահատման ենթարկվող դատավորի (դատավորի թեկնածուի) և ցանկացած շահագրգիռ անձանց ներկայությամբ: Դատավորի որակավորման գնահատման հետ կապված հարցերի քննարկման ժամանակ կարող են ներկա գտնվել դատական ինքնակառավարման համապատասխան մարմինների ներկայացուցիչներ:

Եթե որակավորման գնահատման ընթացքում հայտնաբերվեն փաստեր, որոնք կարող են հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության, Ուկրաինայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովը կարող է դիմել դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցելու իրավասություն ունեցող մարմնին՝ կարգապահական վարույթ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու հարցը լուծելու համար:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմնին դիմելու դեպքում՝ կարգապահական վարույթ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու հարցը լուծելու համար, կամ եթե Որակավորման գնահատման ընթացքում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինը բողոք է ստանում դատավորի վարքագծի վերաբերյալ, որը կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության, Ուկրաինայի դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը իրավունք ունի կասեցնել այս դատավորի որակավորման գնահատման գործընթացը:

Դատավորի գործը (դատավորի թեկնածուի գործը) ձևավորելու և դատավորի (դատավորի թեկնածուի) որակավորման գնահատում անցկացնելու համար

Ուկրաինայի դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը իրավունք ունի անվճար ստանալ դատավորի (դատավորի թեկնածուի), նրա ընտանիքի անդամների կամ հարազատների, նրա գործունեության վերաբերյալ փաստաթղթերի և նյութերի (ներառյալ սահմանափակ հասանելիությամբ) վերաբերյալ տեղեկատվություն և պատճեններ ցանկացած անձից, որը հանդիսանում է պահանջվող տեղեկատվության (փաստաթղթերի և նյութերի) սեփականատեր կամ տիրապետող: Այդպիսի անձինք պարտավոր են հայցվող տեղեկատվությունը (փաստաթղթերը և նյութերը) տրամադրել հարցումն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում:

Օրենքի 87-րդ հոդվածը նախատեսում է, որ Բարեվարքության հանրային խորհուրդը ստեղծվել է Ուկրաինայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովին օգնելու՝ որոշել դատավորի (դատավորի թեկնածուի) համապատասխանությունը մասնագիտական էթիկայի և բարեվարքության չափանիշներին՝ որակավորումը գնահատելու համար:

Բարեվարքության հանրային խորհուրդը իրավասու է՝

1) հավաքել, ստուգել և վերլուծել դատավորի (դատավորի թեկնածուի) վերաբերյալ տեղեկատվությունը,

2) տեղեկատվություն տրամադրել Ուկրաինայի դատավորների Բարձրագույն որակավորման հանձնաժողովին դատավորի (դատավորի թեկնածուի)վերաբերյալ,

3) հիմնավորված պատճառներով Ուկրաինայի դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովին տրամադրելու դատավորի (դատավորի թեկնածուի) մասնագիտական էթիկայի և բարեվարքության պահանջներին չհամապատասխանելու մասին եզրակացություն, որը պետք է ներառվի դատավորի թեկնածուի անձնական գործում կամ դատավորի ծառայողական ցուցակում,

4) պատվիրակելու լիազոր ներկայացուցչին՝ մասնակցելու Ուկրաինայի դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովի՝ դատավորի (դատավորի թեկնածուի)որակավորման գնահատման վերաբերյալ նիստին,

5) ստեղծելու տեղեկատվական բազա դատավորների և դատավորների թեկնածուների մասնագիտական էթիկայի և բարեվարքության վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու համար:

Ուկրաինայի դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը պատճառաբանված որոշում է կայացնում դատավորի (դատավորի թեկնածուի) համապատասխան դատարանում արդարադատություն իրականացնելու կարողությունը հաստատելու կամ չհաստատելու մասին:

Եթե Բարեվարքության հանրային խորհուրդն իր եզրակացության մեջ նշել է, որ դատավորը (դատավորի թեկնածուն) չի համապատասխանում էթիկայի և բարեվարքության չափանիշներին, Ուկրաինայի դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը կարող է որոշում կայացնել հաստատելու դատավորի (դատավորի թեկնածուի) կարողությունը համապատասխան դատարանում արդարադատություն իրականացնելու համար միայն այն դեպքում, եթե դրա առնվազն 11 անդամներ քվեարկեն այս որոշման օգտին:

Դատավորը (դատավորի թեկնածուն), որը համաձայն չէ Ուկրաինայի դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովի որոշման հետ, կարող է վիճարկել այն Ուկրաինայի վարչական արդարադատության օրենսգրքով նախատեսված կարգով (ընթացակարգային խախտումների հիմքով):

Օրենքի 1096-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլնի, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

- վարքագիծը, որը հեղինակազրկում է դատավորի կարգավիճակը կամ խաթարում է արդարադատության հեղինակությունը, մասնավորապես՝ բարոյականության, բարեվարքության, անկաշառության, դատավորի կենսակերպն իր կարգավիճակին համապատասխանեցնելը, դատական էթիկայի այլ նորմերը և դատարանի նկատմամբ հանրային վստահություն ապահովող վարքագծի չափանիշները, այլ դատավորների, փաստաբանների, փորձագետների, վկաների կամ դատավարության այլ մասնակիցների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորումները.

- սույն օրենքով սահմանված ընթացակարգի շրջանակներում դատավորների բարեվարքության մասին հայտարարագիր չներկայացնելը կամ ժամանակին չներկայացնելը, և

- դատավորների բարեվարքության մասին հայտարարագրում ակնհայտ ոչ ճշգրիտ (այդ թվում ՝ ոչ ամբողջական) հայտարարություններ ներկայացնելը:

Օրենքի համաձայն՝ ի թիվս այլնի, էական կարգապահական խախտում է դատավորի կողմից այնպիսի վարքագիծ թույլ տալը, որն արատավորում է դատավորի կոչումը կամ խաթարում է արդարադատության հեղինակությունը, այդ թվում՝ բարոյականության, բարեվարքության, անկաշառության, դատավորի կենսակերպին նրա կարգավիճակին համապատասխանության, դատարանի նկատմամբ հանրային վստահություն ապահովող այլ էթիկական նորմերի եւ վարքագծի չափանիշների պահպանման հարցերում և դատավորի կողմից սահմանված ժամկետում դիտավորյալ բարեխղճության հայտարարագիր կամ ընտանեկան հարաբերությունների հայտարարագիր չներկայացրելը կամ դիտավորյալ բարեվարքության հայտարարագրում ոչ ճշգրիտ (այդ թվում ՝ թերի) հայտարարություններ կատարելը:

Դատավորի (դատավորի թեկնածուի) բարեվարքության վերաբերյալ հայտարարագրի ձև սահմանում է Ուկրաինայի դատավորների բարձրագույն որակավորման հանձնաժողովը:

«Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին» **Մոլդովայի**[45] օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «m[1]» կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմ համարվող կարգապահակն խախտում է «Ինստիտուցիոնալ բարեվարքությա գնահատման մասին» 2013 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 325 օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները չպահպանելը: «Ինստիտուցիոնալ բարեվարքության գնահատման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնատար անձինք պարտավոր են՝

[45] «Դատավորների կարգապահական պատասխանատվության մասին» օրենքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.legis.md/cautare/getResults?doc_id=130335&lang=ru.

ա) թույլ չտալ կոռուպցիոն դրսևորումներ,

բ) անհապաղ տեղեկացնել իրավասու մարմիններին ա) կետով նախատեսված գործողություններում նրանց ներգրավելու ցանկացած փորձի մասին,

գ) անհապաղ տեղեկացնել ոչ պատշաճ ազդեցության մասին, հայտարարագրել նվերները և շահերի բախման իրավիճակները՝ օրենսդրությանը համապատասխան,

դ) իմանալ և կատարել իրենց վրա դրված պարտականությունները՝ համաձայն 5-րդ հոդվածով նախատեսված ազգային և ոլորտային քաղաքականության,

զ) պահպանել հանրային մարմնի կազմում հանրային պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ մասնագիտական բարեվարքության հատուկ պահանջները, որոնք նրանց ներկայացվել են ի գիտություն,

զ) իրականացնել ինստիտուցիոնալ բարեվարքության գնահատման հետևանքով բարեվարքության ծրագրում ներառված միջոցառումները:

Օրենքի համաձայն՝ ինստիտուցիոնալ բարեվարքության գնահատման սուբյեկտներն են հանրային մարմինները, ինքնակառավարման մարմինները, հանրային պաշտոնատար անձինք, Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային կենտրոնը ու Տեղեկատվության և անվտանգության ծառայությունը:

Ինստիտուցիոնալ բարեվարքության գնահատումը և մասնագիտական բարեվարքության թեստավորումն իրականացվում են Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային կենտրոնի ու Տեղեկատվության և անվտանգության ծառայության կողմից:

Կախված սահմանված խախտումների ծանրությունից և հանրային մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրությանը համապատասխան, ստուգված հանրային պաշտոնատար անձինք, մասնագիտական բարեվարքության ստուգման արդյունքում վարքագիծը բացասական գնահատական է ստացել, կրում են միայն կարգապահական պատասխանատվություն:

Մասնագիտական բարեվարքության ստուգման արդյունքները կարող են լինելը՝

ա) դրական՝ այն դեպքում, երբ հանրային պաշտոնատար անձն ապացուցել է իր մասնագիտական բարեվարքությունը՝ պահպանելով 7-րդ հոդվածի 2-րդ մասի ա–գ կետերով նախատեսված պարտականությունները,

բ) բացասական՝ 7-րդ հոդվածի 2-րդ մասի ա–գ կետերով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում,

գ) անորոշ՝ այն դեպքում, երբ ստուգվող հանրային պաշտոնատար անձի վարքագիծը չի կարող դասվել ոչ դրական, ոչ բացասական արդյունքի, ինչպես նաև այն դեպքերում, երբ մասնագիտական բարեվարքության ստուգումն անցկացվել է սույն օրենքի դրույթների խախտմամբ:

Ինստիտուցիոնալ բարեվարքությունը գնահատող հաստատությունը կազմում է ինստիտուցիոնալ բարեվարքության գնահատման արդյունքների մասին հաշվետվություն: Ինստիտուցիոնալ բարեվարքության գնահատման արդյունքների մասին հաշվետվության ամբողջական տարբերակը վերջնական հաստատման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնվում է հանրային մարմնի ղեկավարին կամ, ըստ հանգամանքների, ինքնակառավարման մարմնին:

Մասնագիտական բարեվարքության ստուգման բացասական արդյունքի, ներառյալ թեստավորման ենթարկված հանրային պաշտոնատար անձին պաշտոնից ազատելու կապակցությամբ կարգապահական տույժերը կիրառվում են այն հանրային մարմնի գործունեությունը կարգավորող օրենսդրությանը համապատասխան, որտեղ անձը գործունեություն է իրականացնում: Կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը հաշվարկվում է հրապարակային մարմնի կողմից ինստիտուցիոնալ բարեվարքության գնահատման արդյունքների մասին հաշվետվությունը ստանալու պահից:

4) <u>Հայաստանի Հանրապետությունում իրականացված օրենսդրական փոփոխությունները</u>

Բարեվարքության ստուգման կառուցակարգեր ՀՀ-ում ներդրվեցին դեռևս 2020 թվականի մարտի 25-ին իրականացված օրենսդրական փոփոխություններով:

Մասնավորապես, Ազգային Ժողովի կողմից իրականացվեցին փոփոխություններ «Դատական օրենսգիրք», «Սահմանադրական դատարանի մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքներում, «Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում: Իրականացված փոփոխություններով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում ներդրվեց բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգերը և սահմանվեց, որ բարեվարքության ուսումնասիրություն են անցնելու դատավորների թեկնածուները, սահմանադրական դատարանի թեկնածուները, բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուները, Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների համար և այլն:

Միաժամանակ, 2021-2022 թվականներին իրականացված օրենսդրական մի շարք փոփոխություններով բարեվարքության ստուգման կառուցակարգեր նախատեսվեցին Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների, Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների, Գլխավոր դատախազի թեկնածուի, և այլ պաշտոնատար անձանց համար:

Ընդ որում, հարկ է նշել, որ մինչ այժմ իրականացված օրենսդրական փոփոխություններով բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր նախատեսվել են միայն որոշակի պաշտոնների հավակնող թեկնածուների համար:

Միաժամանակ, դատավորների, դատախազների, ինչպես նաև մի շարք այլ պաշտոնատար անձանց համար, որոնց գործունեությունը կարող է պարունակել կոռուպցիոն բարձր ռիսկեր, մի շարք երկրներում նախատեսվել են բարեվարքության ոչ միայն նախնական, այլև պարբերական գնահատման մեխանիզմներ:

5) Դատավորների դատախազների քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ընթացիկ բարեվարքության, քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության առնչությամբ ռազմավարական պահանջների, ինչպես նաև ԵՄ բյուջետային աջակցությունից բխող պարտավորությունների մասին.

Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 9-րդ միջոցառմամբ նախատեսվել է «Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատավորների, այդ թվում՝

Սահմանադրական դատարանի, թեկնածուների, դատախազների թեկնածուների, քննիչների, առաջխաղացման ցուցակներում ընդգրկված քննիչների, դատախազների և դատավորների, ինչպես նաև ինքնավար և անկախ մարմինների անդամների թեկնածուների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում» միջոցառումը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում բարեվարքության ամրապնդման, ազնիվ, բարեխիղճ և գործունյա հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի կերպարի ստեղծման, հանրային ծառայության համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացման նպատակով:

Միաժամանակ դատաիրավական ռազմավարության միջոցառումների ծրագրի նպատակ 4-ի և 5-ի շրջանակներում նախատեսվել են միջոցառումներ դատավորների, դատախազների և քննիչների բարեվարքության պարբերական/ընթացիկ ուսումնասիրության ներդրման ուղղությամբ:

Կառավարության ծրագրով ևս նախատեսված է օրենսդրական ամբողջական կարգավորման ենթարկվել դատավորների բարեվարքության ստուգման համակարգը, սահմանել պարբերական մեխանիզմներ, ապահովել Կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ:

Միաժամանակ, վերոգրյալ պաշտոններ զբաղեցնող անձանց համար բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության պահանջ նախատեսվել է ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններով:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծերով առաջարկվում է իրականացնել մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են բարեվարքության ստուգման գործող կառուցակարգերի աստիճանական զարգացմանը, ինչպես նաև նոր ինստիտուտների ներդրմանը: Մասնավորապես՝

1) Նախագծերով առաջարկվում է ներդնել դատավորների, դատախազների, քննչական կոմիտեում և հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգեր: Ըստ

ներդրվող կառուցակարգերի նախատեսվում է, որ համապատասխան պաշտոնում նշանակվելու հաջորդ տարվանից սկսած վեցերորդ տարում առաջին անգամ դատավորի, դատախազի, Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնի կամ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնի նշանակվող անձինք անցնելու են բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ յուրաքանչյուր դեպքում անձը ընթացիկ բարեվարքության ուսումնասիրություն անցնելու է միայն մեկ անգամ՝ առաջին անգամ պաշտոնի նշանակվելու դեպքում: Իսկ արդեն համակարգում պաշտոն զբաղեցնելու ընթացքում առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու դեպքում անձը այլևս բարեվարքության ընթացիկ ուսումնասիրությունն չի անցնելու:

Յուրահատուկ է բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության համար նախատեսված ժամկետների հաշվարկի մեխանիզմը այն դեպքում, երբ անձը առաջին անգամ պաշտոնի նշանակվելուց հետո մինչև բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության տարին ներառվում է առաջխաղացման ցուցակներում ու այդ հիմքով անցնում է բարեվարքության ևս մեկ ուսումնասիրություն: Նման դեպքերում բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության համար նախատեսված 6 տարվա ժամկետի հաշվարկը սկսում է հաշվարկվել առաջխաղացման ենթակա դատավորների ցուցակներում ընդգրկվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:

2) Միաժամանակ նախագծով նախատեսվում է, որ բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված բացասական եզրակացությունը պարտադիր է կարգապահական վարույթ հարուցելու/ծառայողական քննություն սկսելու համար: Բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում տրված բացասական եզրակացության հիմքով հարուցված կարգապահական վարույթի/ծառայողական քննության արդյունքներով արդեն պարզ է դառնում, թե արդյոք համապատասխան պաշտոնատար անձի վարքագծում և գույքային դրության վերաբերյալ հանգամանքներում առկա են կարգապահական խախտումներ և արդյոք

համապատասխան պաշտոնատար անձը պետք է ենթարկվի կարգապահական պատասխանատվության:

3) Փաթեթով ներդրվող բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում տրամադրվող խորհրդատվական բնույթի բացասական եզրակացության դեպքում կարգապահական վարույթ (ծառայողական քննություն) հարուցելու վաղեմության ժամկետներով առաջարկում է չսահմանափակել գույքային դրության հետ կապված կարգապահական խախտման դեպքերով ժամկետները, քանի որ հատկապես այն անձանց դեպքում, ովքեր բարեվարքության ուսումնասիրություն անցնելու են առաջին անգամ, ուսումնասիրության շրջանակն ընդգրկելու է անձի և վերջինիս ընտանիքի անդամների ընդհանուր գույքային դրությունը, և այս դեպքում ևս գույքի ծագման աղբյուրի հարց է առաջանալու: Գույքային դրության հիմքով ներկայացված բացասական եզրակացությունների համար ժամկետային սահմանափակում նախատեսելու հետևանքով գործընթացը կրելու է ձևական բնույթ և չի հանգեցնելու նախագծով ակնկալվող արդյունքին: Այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2021 թվականի փետրվարի 9-ի Xhoxhaj v. Albania վճռով[46] նշել է հետևյալը. «Հաշվի առնելով, որ անձնական կամ ընտանեկան ակտիվները սովորաբար ձևավորվում են ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում, ակտիվների գնահատման համար ժամանակային խիստ սահմանափակումներ նախատեսելը մեծապես կսահմանափակի և կխանգարի ձեռք բերված ընդհանուր ակտիվների օրինականությունը գնահատելու իշխանությունների կարողությանը:»:

Նշվածի համատեքստում, եթե օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովը վերլուծելու է նախկինում ներկայացված բոլոր հայտարարագրերը, սակայն պատասխանատվության վաղեմության ժամկետ սահմանվելու է ընդամենը վեց տարի, կատարված ուսումնասիրությունը ևս իմաստազուրկ է լինելու:

4) Առաջարկվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքում իրականացնել փոփոխություններ, որոնցով նախատեսվում է վերանայել

[46] ECtHR, 9 February 2021, 15227/19, Xhoxhaj v Albania, §§ 349, 351, http://hudoc.echr.coe.int/fre?i=001-208053

բարեվարքության ուսումնասիրության ներկայիս կառուցակարգերը, ներկայացվող տեղեկատվության շրջանակը, ինչպես նաև ներդնել նոր կարգավորումներ ուղղված դատավորների, դատախազների և քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ընթացիկ ուսումնասիրությունն ապահովելուն: Անհրաժեշտ է ընդգծել, որ նախագծերով նախատեսվում է սահմանափակել բարեվարքության ուսումնասիրության արդյունքում տրվող խորհրդատվական եզրակացությունների բնույթը՝ հստակ նշելով, որ բարեվարքության ուսումնասիրության դեպքում հնարավոր է տալ միայն դրական և բացասական խորհրդատավական եզրակացություններ: Միևնույն ժամանակ թվարկվում են այն դեպքերը, երբ բարեվարքության ուսումնասիրության արդյունքում տրվում է բացասական եզրակացություն և երբ է տրվում դրական եզրակացություն:

5) «Քննչական կոմիտեի մասին» օրենքում իրականացնել փոփոխություններ, որոնցով Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածությունների և առաջխաղացման ցուցակներում ընդգրկվող անձինք կանցնեն բարեվարքության ուսումնասիրություն: Ընդգծենք, որ քննչական կոմիտեում առաջին անգամ պաշտոնի նշանակվելու կամ առաջխաղացման կարգով պաշտոնի նշանակվելու համար համապատասխան ցուցակներում ընդգրկվելու համար բարեվարքության ուսումնասիրություն անցնելու ինստիտուտը ամբողջովին նոր է քննչական կոմիտեի համակարգում, սակայն արդեն իսկ տարբեր ծավալներով իր արդյունավետ ներդրումն է ստացել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, դատախազի, դատավորի պաշտոնում նշանակվելու վերաբերյալ գործող կառուցակարգերում:

6) «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում իրականացնել փոփոխություններ, որոնց արդյունքում նախատեսվում է ներդնել բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր առաջխաղացման հավակնող հակակոռուպցիոն ծառայողների համար: Ներկայիս կարգավորումներովբարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն իրականացնելու անցնելու պարտականություն դրված է միայն հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար: Ընդգծենք, որ նախկինում բարեվարքության ուսումնասիրություն անցնելու

պարտականությունն սահմանված չէր առաջխաղացման կարգով պաշտոնում նշանակվելու համար համապատասխան ցուցակներում ընդգրկվելու համար:

7) Դատավորների համար ևս նախատեսվել են բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգեր: Ընդ որում, հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի առանձնահատկությունները՝ բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության շրջանակներում խորհրդատվական բնույթի բացասական եզրակացության դեպքում դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն տրամադրվել է ինչպես դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, այնպես էլ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ են իրականացվել 69-րդ հոդվածում, որով սահմանվում են դատավորների վարքագծի կանոնները: Փոփոխությունների արդյունքում առավել հստակեցվել են դատավորների վարքագծի կանոնները՝ հստակ մատնանշելով, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության համար հիմք հանդիսացող վարքագծի դրսևորումը ևս կարող է հանգեցնել դատավորի վարքագծի կանոնների խախտման, հետևաբար հիմք հանդիսանալ կարգապահական վարույթ իրականացնելու համար: Նշվածը ենթադրում է նաև, որ, ի թիվս այլնի, գույքային դրության և փաստացի ստացած եկամուտների միջև առկա էական անհամապատասխանությունը, գույքի ծագման աղբյուրը չհիմնավորելը ևս հանգեցնելու է կարգապահական վարույթի հարուցման և ներգործության միջոցների կիրառման:

8) Հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու գործընթացին առնչվող կարգավորումներում ևս առաջարկվում են կատարել մի շարք լրացումներ և փոփոխություններ:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-ին հոդվածը սահմանում է բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացման ենթակա

տվյալների ընդհանուր սպառիչ ցանկը, սակայն տարընկալումներից խուսափելու և անձանց (թեկնածուների) համար լրացման գործընթացը պարզեցնելու համար անհրաժեշտություն է առաջացել առավել մանրամասնելու նշված տվյալների բովանդակությունը:

Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացման ենթակա տվյալներից է նաև անձի (թեկնածուի) ընտանիքի անդամների գույքային դրության՝ գույքի և եկամուտի վերաբերյալ ամփոփ տեղեկությունները: Այս առումով, առաջարկվում է հստակեցնել, որ տվյալ մասում սահմանված գույքի և եկամուտի վերաբերյալ ամփոփ տեղեկությունները համընկնում են «Հանրային ծառայության մասին» օրենքի 40-րդ և 41-րդ հոդվածներով սահմանված տեղեկությունների հետ:

9) Նախագծերով առաջարկվում է Հանձնաժողովին հնարավորություն տալ անձի (թեկնածուի)՝ կարգապահական, քրեական և վարչական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ տվյալներից բացի նաև պահանջելու տեղեկություններ այն մասին, թե արդյոք անձը հանդիսացել է հայցվոր կամ պատասխանող: Նշված տվյալները կապահովեն անձի (թեկնածուի) մասով էական տեղեկատվության առկայությունը և ներառվելով բարեվարքության վերաբերյալ եզրակացության մեջ՝ առավել հստակ պատկերացում կփոխանցեն անձին (թեկնածուին) նշանակող մարմնին:

Հանձնաժողովը բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելիս անձի՝ քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրության նպատակով իրավասու է դիմել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանալու տեղեկություններ: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարեվարքության ուսումնասիրության մաս է կազմում նաև գույքային դրության ստուգումը, որն իրականացնում է հայտարարագրերի ստուգման գործիքակազմի շրջանակներում՝ առաջարկվում է տարընկալումներից խուսափելու նպատակով կարգավորումը հստակեցնել՝ սահմանելով, որ բարեվարքության ուսումնասիրման գործընթացում գույքի փաստացի տիրապետումը, անձի հետ փաստացի համատեղ բնակվելը, ինչպես

նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը անձի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելը կամ անձի կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալը կամ այդ գույքը տնօրինելն ստուգելու նպատակով Հանձնաժողովն իրավասու է դիմելու օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, ինչը կնպաստի վարչական և այլ իրավախախտումների, հանցագործությունների բացահայտմանը, կանխմանը և խափանմանը: Հատկանշական է, որ անձի բարեվարքության ստուգման գործընթացում օպերատիվ-հետախուզական մարմիններին դիմելու պրակտիկան առկա է մի շարք պետություններում: Մասնավորապես, որպես օրինակ, Ալբանիայում բարեվարքության ստուգում իրականացնող մարմինը դատավորների և դատախազների բարեվարքության ստուգում կատարելիս իրավասու է տեղեկություններ հայցել, ի թիվս այլ մարմինների, նաև օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պետական մարմիններից (Ալբանիայի Հանրապետությունում դատավորների և դատախազների կարգավիճակի մասին օրենքը):

10) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվող տվյալների ցանկը ենթարկվել է նաև այլ բարելավումների, որոնք թույլ կտան առավել ճկուն և տարընթերցումները բացառող տվյալների ցանկ առանձնացնել և մշակել, ինչն էականորեն կդյուրացնի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության ուսումնասիրության իրականացման գործընթացը:

11) Նախագծերով բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության գործընթացն առավել դյուրինացնելու տեսանկյունից առաջարկվում է բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության հարցաթերթիկը ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

Մասնավորապես, Նախագծերով նախատեսվում է, որ Դատավորների, դատախազների և քննիչների բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության շրջանակներում բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով: Միաժամանակ, մինչև էլեկտրոնային համակարգի գործարկումը նախատեսվում է, որ հարցաթերթիկները կներկայացվեմ թղթային տարբերակով:

Բացի այդ, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը համալրելու գործընթացում նախատեսվել է, որ համապատասխան թեկնածուները ներկայացնում են բարեվարքության հարցաթերթիկը էլեկտրոնային համակարգի միջոցով:

Որոշակի բացառություններ է սակայն նախատեսվում առաջխաղացման առանձնահատուկ դեպքերի նկատմամբ: Մասնավորապես, վերջին 10 տարվա ընթացքում պաշտոնավարած նախկին դատավորը, որն ունի դատավորի առնվազն հինգ տարվա փորձառություն, իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդող կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարող և վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն ունեցող անձանց բարեվարքության ուսումնասիրությունը վերաքննիչ դատարանում առաջխաղացման ցուցակներում ընդգրկվելու ժամանակ իրականացվում է թղթային եղանակով:

Նմանատիպ մոտեցում է նաև առկա Վճռաբեկ դատարանում առաջխաղացման գործընթացի որոշակի առանձնահատուկ դեպքերում: Մասնավորապես, վերջին 10 տարվա ընթացքում պաշտոնավարած նախկին դատավորը (որն ունի առնվազն 10 տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, որից առնվազն հինգը՝ դատավորի փորձառություն), ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած, ինչպես նաև վերջին 12 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառություն ունեցող անձանց բարեվարքության ուսումնասիրության իրականացումը առաջխաղացման գործընթացում իրականացվում է թղթային եղանակով:

Նմանատիպ առանձնահատկություններ են նախատեսված նաև Քննչական կոմիտեում իրականացվող բարեվարքության ուսումնասիրության գործընթացում:

Մասնավորապես, նախատեսվում է, որ Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակը համալրելուց թեկնածուները անցնում են բարեվարքության ուսումնասիրություն թղթային տարբերակով, իսկ առաջխաղացման ժամանակ, բացառությամբ «Քննչական կոմիտեի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց, բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով: Որոշակի առանձնահատկություններ են առկա նաև դատախազների և Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների համար:

12) Միևնույն ժամանակ առաջարկվում է փոփոխել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կանոնները՝ կարգապահական վարույթ հարուցելու վաղեմության ժամկետների վերաբերյալ: Առաջարկվում է որպես ժամկետների հաշվարկի ավարտ ընդունել ոչ թե կարգապահական վարույթ հարուցելու օրը, այլ ծառայողական քննություն նշանակելու օրը: Այս փոփոխության հիմքում է ընկած այն հանգամանքը, որ կարգապահական վարույթը ծառայողական քննության երկրորդ փուլն է, որը հաջորդում է նախնական ուսումնասիրության փուլին: Հետևաբար վաղեմության ժամկետը պետք է ընդհատվի ոչ թե կարգապահական վարույթ հարուցելով, այլ ծառայողական քննություն նշանակելով:

Այս կարգավորումը կնպաստի նաև ևս մեկ այլ խնդրի լուծմանը՝

Օրենքի գործող կարգավորումից բխում է, որ եթե կարգապահական վարույթը պետք է հարուցվի կարգապահական խախտում հայտնաբերելուց հետո 30 օրում, ապա ստացվում է, որ կարգապահական խախտումը հայտնաբերելուց հետո այդ 30 օրում պետք է նշանակվի ծառայողական քննությունը, այնուհետև պետք է կատարվի և ավարտվի նախնական ուսումնասիրությունը, արդյունքները տրվեն կարգապահական հանձնաժողովին, ուսումնասիրվեն և քննարկվեն, որպեսզի հնարավոր լինի 30 օրում կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ որոշում կայացվի: Բացի գործնականում այս գործողությունները 30 օրում կատարելու դժվարություններից, ըստ էության անտեսվում է նաև այն հանգամանքը, որ նախնական ուսումնասիրությունը տարբեր օբյեկտիվ պատճառներով կարող է ձգձգվել (օրինակ ծառայողի

բացակայություն և այլն), ինչը կարող է հանգեցնել նրան, որ օբյեկտիվ հիմքերով պայմանավորված հնարավոր չլինի մինչև 30 օրը լրանալն ավարտել նախնական ուսումնասիրությունը, ինչը կհանգեցնի նրան, նախնական ուսումնասիրության թերի կկատարմանը կամ էլ ժամկետի խախտմանը, ինչի արդյունքում անձը կազատվի կարգապահական պատասխանատվությունից ոչ օբյեկտիվ հիմքերով:

Նույնաբնույթ փոփոխություններ են կատարվել նաև «Քննչական կոմիտեի մասին» օրենքի 31-րդ հոդվածում:

13) Նախագծով առաջարկվում է նաև սահմանել, որ բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում տրամադրվող խորհրդատվական եզրակացությունը ենթակա չէ հրապարակման՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում գործ ունենք անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ, պաշտոնատար անձին կդնի անհիմն խոցելի դրության մեջ՝ վերջինիս վերաբերյալ անհիմն լայն ծավալի տվյալներ դարձնելով հրապարակային:

14) Նախագծերի անցումային դրույթներով սահմանվել են իրավակարգավորումներ, որոնք կապահովեն հնարավորինս սեղմ ժամկետներում ներդրվող կառուցակարգերի իրացումը, ինչպես նաև գործող դատավորների, դատախազների, քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնելը:

Մասնավորապես, առաջարկվող մոտեցման պարագայում վերոգրյալ մարմիններում այն անձինք, ովքեր չեն անցել բարեվարքության ուսումնասիրություն, բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն կանցնեն ըստ որոշակի հերթականության մինչև 2027 թվականը:

Միաժամանակ, այն անձինք, ովքեր մինչև սույն Նախագծերի ուժի մեջ մտնելը, պաշտոնում նշանակվելիս անցել են բարեվարքության ուսումնասիրություն, բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնում են ընդհանուր կարգով, իսկ ժամկետի հաշվարկը սկսվում է վերջին նշանակմանը հաջորդող օրացուցային տարվանից:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագծերը մշակվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

4. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում սպասվելիք փոփոխությունները.

Նախագծերի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա, պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն նախատեսվում:

5. Ակնկալվող արդյունքները.

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է ներդնել բարեվարքության պարբերական ստուգման մեխանիզմներ դատավորների, դատախազների և քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար: Նշվածը ապահովելու է վերոգրյալ պաշտոնատար անձանց գործունեությունը պարբերաբար ուսումնասիրելու հնարավորություն՝ կոռուպցիոն բնույթի դրսևորումներում ներգրավվածությունը բացահայտելու տեսանկյունից:

Ինչպես նաև նախատեսվում է բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր ներդնել քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների և առաջխաղացման ցուցակներում ընդգրկվող անձանց համար:

Վերոգրյալ փոփոխություններն ուղղված են ապահովելու Հայաստանում բարեվարքության կառուցակարգերի ամրապնդմանը և շարունակական կատարելագործմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Կ-744²-14.12.2023-ՊԻ-011/1

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածում՝

1. 3-րդ մասում «համալրման ենթակա տեղերի քանակը» բառերից հետո լրացնել « և կցելով բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևանմուշը» բառերը:

2. 4-րդ մասի 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով. «6) բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ:»:

3. 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Հայտատուները հանձնում են գրավոր քննություն, որի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում, ոԱրակավորման հանձնաժողովը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում գրավոր քննության արդյունքում դրական գնահատական ստացած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:»:

4. Լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին, ~~և~~ 7.2-րդ և 7.3-րդ մասերով.

«7.1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո անցկացվում է բանավոր քննություն: Բանավոր քննության ընթացքում թեկնածուին հարցադրումներ են արվում նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության վերաբերյալ: Որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուների ընտրության ընթացքում գնահատման ենթակա տվյալների թվում է նաև թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

7.2. Գրավոր և բանավոր քննություններից դրական գնահատական ստացած անձինք անցնում են հոգեբանական գնահատում: Քննություններից դրական գնահատական և հոգեբանական գնահատումը բարեհաջող անցած հայտատուներն ընդգրկվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում՝ որակավորման հանձնաժողովի որոշմամբ:

7.3. Գրավոր և բանավոր քննությունների անցկացման կարգը, հոգեբանական գնահատմանը վերաբերող հարցերի շրջանակը և լրացման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1. -ին, 1.2~~.~~ -րդ և 1.3-րդ մասերով՝

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձինք, որակավորման հանձնաժողովի կողմից ծանուցում ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում էլեկտրոնային համակարգում լրացնում ~~թարմացնում~~ են բարեվարքության վերաբերյալ ~~ընթացիկ ուսումնասիրության~~ հարցաթերթիկ~~ում ներկայացված տեղեկատվությունը~~, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընգրկվելուն հավակնող անձինք որակավորման հանձնաժողովի կողմից ծանուցում ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում որակավորման հանձնաժողով են ներկայացնում բարեվարքության վերաբերյալ ~~ընթացիկ ուսումնասիրության~~ լրացված հարցաթերթիկ:

1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով~~, ինչպես նաև սույն օրենքի 31.1-ին հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով~~ նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում որակավորման հանձնաժողովը առաջխաղացման ենթակա անձանց կողմից բարեվարքության վերաբերյալ ~~ընթացիկ ուսումնասիրության~~ հարցաթերթիկ~~ում~~ լրացված ~~տվյալների թարմացված~~ լինելու վերաբերյալ տեղեկացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

1.3. Ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ եզրակացությունը տրամադրելիս որակավորման հանձնաժողովի կողմից գնահատման ենթակա հանգամանքներից է նաև թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:»:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել նոր 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ մասերով՝

«4.1. Մինչ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից քննչական կոմիտեի նախագահի թեկնածուին Կառավարությանը ներկայացնելը՝ վարչապետի աշխատակազմը, իսկ քննչական կոմիտեի նախագահի տեղակալների թեկնածուներին, քննչական կոմիտեի նախագահի կողմից վարչապետին ներկայացնելը՝ քննչական կոմիտեի նախագահը, թեկնածուների կողմից լրացված բարեվարքության

վերաբերյալ հարցաթերթիկները ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ քսանօրյա ժամկետում խորհրդատվական բնույթի եզրակացություն ստանալու նպատակով:

4.2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը քննչական կոմիտեի նախագահի թեկնածուի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունը տրամադրում է ՀՀ վարչապետին, իսկ քննչական կոմիտեի նախագահի տեղակալների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունը տրամադրում է քննչական կոմիտեի նախագահին:

4.3. Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից քննչական կոմիտեի նախագահի թեկնածուին Կառավարությանը ներկայացնելու, իսկ քննչական կոմիտեի նախագահի տեղակալների թեկնածուներին, քննչական կոմիտեի նախագահի կողմից վարչապետին ներկայացնելու հետ մեկտեղ ներկայացվում են նաև թեկնածուների կողմից լրացված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկները և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունները:»:

Հոդված 4. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված կարգով և սույն օրենքով նախատեսված դեպքերում ու ժամկետներում ներկայացնել բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկ:»:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով, իսկ 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից այնպիսի վարքագիծ դրսևորելը կամ գույքային դրության առնչությամբ այնպիսի անհամապատասխանությունը ~~խնդրի առկայությունը~~, որը հանգեցրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրելուն:»:

Հոդված 6. Օրենքի 31-րդ հոդվածի.

1. 1-ին մասում «նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի միջնորդությամբ:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն ներկայացնելու դեպքում պարտադիր հարուցվում է ծառայողական քննություն:»:

~~2. 1.1-ին մասում «նախնական ուսումնասիրություն կատարելու կարգը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ծառայողական քննության արդյունքների հրապարակման կարգը» բառերը:~~

~~3~~2. 3-րդ մասում «կարգապահական վարույթի» բառերը փոխարինել «ծառայողական քննության» բառերով:

~~4~~3. 4-րդ մասում «Կարգապահական վարույթը» բառերը փոխարինել «Ծառայողական քննությունը» բառերով:

~~5~~4. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին մասով.

«4.1. Ծառայողական քննությունը հարուցվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքում բացասական բնույթի եզրակացությունը տրամադրելուց ~~պահից~~ հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց վեց ~~երեք~~ տարի հետո (բացառությամբ բարեվարքության գույքային դրության առնչությամբ հարուցվող ծառայողական քննությունների): Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության շրջանակներում գույքային դրության ուսումնասիրության արդյունքում ~~գույքային~~ խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրելու ~~դրության առնչությամբ խախտում հայտնաբերելու~~ դեպքում ծառայողական քննությունը հարուցվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բացասական եզրակացությունը տրամադրելուց ~~պահից~~ հետո՝ մեկ տարվա ժամկետում:»:

~~6. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 15-րդ մասով.~~

~~«15. Քննչական կոմիտեի կայքէջում հրապարակվում է տեղեկատվություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն ներկայացնելու դեպքում հարուցված ծառայողական քննության արդյունքների վերաբերյալ համապատասխան որոշումը կայացնելու պահից հետո 10-օրյա ժամկետում՝ բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տվյալների:»:~~

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31.1-ին հոդվածով.

«Հոդված 31.1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրությունը

1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրությունն իրականացվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով՝ առաջին անգամ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում նշանակվելու տարվանից հետո վեցերորդ տարում: ~~յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ հերթական ատեստացիայի հետ միաժամանակ: Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք արտահերթ ատեստավորման ժամանակ բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն չեն անցնում:~~ Քննչական կոմիտեի նախագահը և նրա տեղակալները բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն չեն անցնում:

2. Նախկինում քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած այն անձը, ով պաշտոնավարումը դադարելուց հետո, կրկին նշանակվում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում, բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնում է կրկին պաշտոնում նշանակվելուց հետո վեցերորդ տարում:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված ժամկետները հաշվարկվում են քննչական կոմիտեի ինքնավար պաշտոնում նշանակվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:

4. Այն դեպքում, երբ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում նշանակվելուց հետո մինչև բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության տարին, անձը առաջխաղացման նպատակով անցնում է բարեվարքության ուսումնասիրություն, ապա բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության համար նախատեսված վեց տարվա ժամկետը սկսում է հաշվարկվել քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակ ընդգրկվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:

5. ~~2.~~ Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով_____

6. Բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկը լրացվում է բարեվարության ընթացիկ ուսումնասիրություն անցնելու տարվա հունվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում:

7. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, սույն հոդվածով նախատեսված ուսումնասիրության արդյունքում ընդունված խորհրդատվական բնույթի եզրակացությունը տրամադրում է քննչական կոմիտեի նախագահին:»:

~~3. Բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկը լրացվում է.~~

~~1)սույն օրենքի 35-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքում՝ համապատասխան արձակուրդից վերադառնալուց հետո՝ ատեստավորման հետ միաժամանակ,~~

~~2) սույն օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում՝ աշխատանքի ներկայանալուց հետո տասնօրյա ժամկետում,~~

~~3) սույն օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքում՝ ատեստավորման անցկացման մասին տեղեկացվելուց հետո տասնօրյա ժամկետում,~~

~~4) սույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման ոչ ենթակա անձինք անցնում են բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով և համապատասխան հարցաթերթիկը լրացնում են յուրաքանչյուր երրորդ տարվա հունվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում:~~

Հոդված 8. Օրենքի 35-րդ հոդվածի.

3. 14-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ նախաձեռնելով բննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակում ներառելու գործընթաց.»:

4. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 14.1-ին, 14.2-րդ և 14.3-րդ մասերով.

«14.1. Սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունելուց հետո որակավորման հանձնաժողովը բննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին ծանուցում է՝ տասնօրյա ժամկետում բարեվարքության ուսումնասիրության հարցաթերթիկի՝ էլեկտրոնային համակարգում լրացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

14.2. Սույն հոդվածի 14.1-ին մասով նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում որակավորման հանձնաժողովը առաջխաղացման ենթակա անձանց կողմից բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում տվյալների լրացված լինելու վերաբերյալ տեղեկացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով մեկամսյա ժամկետում բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

14.3. Սույն հոդվածի 14.2-րդ մասում նշված անձանց բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո որակավորման հանձնաժողովը որոշում է կայացնում անձին առաջխաղացման ցուցակում ներառելու կամ չներառելու վերաբերյալ:»:

3. 16-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«16. Որակավորման հանձնաժողովի որոշումը հանձնաժողովի նախագահն ատեստավորման օրվանից հետո (բացառությամբ սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունելու դեպքի)՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է բննչական կոմիտեի նախագահին, իսկ սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետը սկսվում է հաշվարկվել սույն հոդվածի 14.3-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելուց հետո:»:

Հոդված ~~8~~9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության շրջանակներում բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացման կարգը, բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկի ձևանմուշը, լրացման կարգը, հարցաթերթիկում ներառվող տվյալների մանրամասները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

2. Մինչ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկների լրացման էլեկտրոնային համակարգի գործարկումը բարեվարքության ուսումնասիրություն անցնող անձանց կողմից բարեվարքության

վերաբերյալ հարցաթերթիկները ներկայացվում են թղթային տարբերակով~~՝ օրենքով սահմանված կարգով~~:

~~3. «Քննչական կոմիտեի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված անձանց բարեվարքության վերաբերյալ առաջին ընթացիկ ուսումնասիրությունն իրականացվելու է 2026 թվականին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով: Նշված անձինք բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկը ներկայացնում են տվյալ տարվա հունվարի 1-ից մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում:~~

3. 2024 թվականին թվականին պետք է բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնի քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 20 տոկոսը, 2025 թվականին՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 25 տոկոսը, 2026 թվականին՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 25 տոկոսը, 2027 թվականին՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 30 տոկոսը:

4. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության վերաբերյալ առաջին ընթացիկ ուսումնասիրությունն անցնելու հերթականությունը սահմանվում է քննչական կոմիտեի նախագահի կողմից՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում:

5. 2024 թվականին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկը ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով քննչական կոմիտեի նախագահի կողմից բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնելու հերթականությունը սահմանելուց հետո մեկամսյա ժամկետում:

6. 2025, 2026 և 2027 թվականներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում:

7. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձինք բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցելուց հետո բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնում են սույն օրենքի 31.1 հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում, որը սկսվում է հաշվարկվել բարեվարքության առաջին ընթացիկ ուսումնասիրություն անցնելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Կ-744-14.12.2023-ՊԻ-011/1 ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում իրականացվող փոփոխությունը հանել: Միևնույն ժամանակ, առաջարկվում է առաջարկվող վարքագծի կանոնը խմբագրել և այն՝ որպես նախագծի նոր կանոն լրացնել նույն հոդվածի 1-ին մասում՝ որպես 17-րդ կետ՝	Ընդունվել է	Ընդունվել է

			հետևյալ բովանդակությամբ. «17. զերծ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքում հանգեցրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն ներկայացնելուն»: Հաշվի առնելով վերոնշյալը առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «15.1-ին կետով» բառերը փոխարինել «և 17-րդ կետերով» բառերով:		
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծերով նախատեսված բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության յուրաքանչյուր համապատասխանաբար 4 և 3 տարվա փոխարեն սահմանել բարեվարքության ընթացիկ ստուգում թեկնածուների ցուցակներից կամ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակներից պաշտոնում նշանակվելու տարվանից հետո վեցերորդ տարում, իսկ ժամկետի հաշարկը սկսել պաշտոնում նշանակվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից: Միևնույն ժամանակ, առաջարկվում է Նախագծերում կատարել վերոգրյալ առաջարկությունից բխող այլ փոփոխություններ: Հիշյալ փոփոխություններով կապահովվի բարեվարքության ուսումնասիրության առավել	Ընդունվել է	Ընդունվել է

			արդյունավետ մոդել, երբ կապահովվի մի կողմից դատական, դատախազական համակարգերում և քննչական մարմիններում բարեվարքության բարձր մակարդակը, մյուս կողմից՝ այնպիսի պարտականություններով չի ծանրաբեռնի այդ մարմիններին, որ արդյունքում խոչընդոտի բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնող անձանց կողմից իրենց պարտավորությունների արդյունավետ իրականացմանը: Այս մոտեցման արդյունքում կապահովվի նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը՝ անհարկի չծանրաբեռնելով այդ մարմնին: Արդյունքում առաջարկվում է նախագծի 2-րդ՝ 1) հոդվածով լրացվող նոր՝ 73.1-ին հոդվածի 1-ին մասում «չորս տարին մեկ անգամ» բառերը փոխարինել «որպես դատավոր առաջին անգամ նշանակվելուց հետո վեցերորդ տարում» բառերով, 2) հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Նախկինում դատավորի պաշտոն զբաղեցրած այն անձը, ով պաշտոնավարումը դադարելուց հետո, կրկին նշանակվում է դատավորի պաշտոնում, բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնում է դատավորի պաշտոնում		

			նշանակվելուց հետո վեցերորդ տարում:»: 3) հոդվածը լրացնել նոր 3-րդ և 4-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված ժամկետները հաշվարկվում են դատավորի պաշտոնում նշանակվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից: 4. Այն դեպքում, երբ դատավորի պաշտոնում նշանակվելուց հետո մինչև բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության տարին դատավորը առաջխաղացման նպատակով անցնում է բարեվարքության ուսումնասիրություն, ապա բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության համար նախատեսված վեց տարվա ժամկետը սկսում է հաշվարկվել առաջխաղացման ենթակա դատավորների ցուցակներում ընդգրկվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:», իսկ հոդվածի նախկին խմբագրությամբ 4-րդ մասում «յուրաքանչյուր չորրորդ» բառերը փոխարինել «բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնելու» բառերով: Վերանայվել է մասերի համարակալումը:		
3.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 3-րդ, 4-րդ, 5-րդ հոդվածի 2-րդ մաս, 6-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածում՝ 1) «թարմացնում» բառը փոխարինել «լրացնում բառով» հաշվի առնելով բարեվարքության ընթացիկ	Ընդունվել է	Ընդունվել է

			ուսումնասիրության ժամկետների փոփոխությունը, 2) «տեղեկատվությունը» բառը փոխարինել «տեղեկություն» բառով՝ հաշվի առնելով, որ «տեղեկատվություն» բառը նշանակում է որևէ բանի մասին տեղեկություն, տվյալ տալու գործողություն, իսկ «տեղեկություն» բառը նշանակում է լուր, գիտելիք, տվյալ, 3) «տեղեկատվության թարմացված» բառերը փոխարինել «բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը լրացված» բառերով՝ հաշվի առնելով բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության ժամկետների փոփոխությունը: Առաջարկվում է հանել 3-րդ հոդվածի 2-րդ մասը, և 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 4-րդ հոդվածում «8.1-րդ և 8.2-րդ մասերով» բառերը փոխարինել «8.1-ին մասով» բառերով, իսկ հոդված 6-ում «4.1-րդ և 4.2-րդ մասերով» բառերը փոխարինել «4.1—ին մասով» բառերով: Սույն առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախկին իրավակարգավորումները պայմանավորված էին բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն իրականացնելու էականորեն տարբեր պարբերականությամբ, երբ դատական համակարգում դատավորները, դատախազական համակարգում դատախազները կամ		

			քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք բավական բարձր պարբերականությամբ՝ համապատասխանաբար չորս կամ երեք տարին մեկ լրացնում էին բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկները: Դրա արդյունքում վերջիններս էլեկտրոնային համակարգում մշտապես կունենային համեմատաբար թարմացված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ ու դրանով պայմանավորված առավել նպատակահարմար էր ՀՀ վերաքննիչ կամ Վաճռաբեկ դատարաններում պաշտոնի նշանակվելու համար առաջխաղացման ցուցակներում ընդգրկվելու համար այդպիսի անձ հանդիսացող թեկնածուներից չպահանջել լրացնել բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը և ներկայացնել ընդհանուր կարգով: Սակայն ընտրված նոր՝ առավել լայն ժամկետներով ու պարբերականությամբ բարեվարքության հարցաթերթիկ ներկայացնելու պայմաններում առանձնահատուկ կանոններ սահմանելը հիշյալ անձանց մասով դառնում է իմաստազուրկ:		
4.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 7-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 7-րդ հոդվածը հանել, քանի որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածում փոփոխություններ իրականացնելու	Ընդունվել է	Ընդունվել է

			անհրաժեշտությունը բացակայում է: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ նույն օրենքի 69-րդ հոդվածում վերախմբագրվել է լրացվող վարքագծի կանոնը և այն շարադրվել է նոր խմբագրությամբ առանձին կետի տեսքով:		
5.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 8-րդ հոդված, (լրամշակված 7-րդ հոդված)	Միևնույն ժամանակ վերոնշյալ հիմնավորմամբ առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածում հանել «բնույթի» բառը, «տրամադրելու պահից» բառերը փոխարինել «տրամադրելուց» բառով, «չորս» բառը փոխարինել «վեց» բառով: Առաջարկվում է նաև «Սույն օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-ին կետով նախատեսված խնդրի առնչությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից» բառերը հանել և 3-րդ նախադասությունում «Բարեվարքության» բառից հետո լրացնել «վերաբերյալ» բառը, իսկ «ընթացիկ ուսումնասիրության» բառից հետո լրացնել «շրջանակներում գույքային դրության ուսումնասիրություն» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 9-րդ հոդված, (լրամշակված 8-րդ հոդված)	Միևնույն հիմնավորմամբ, այն է՝ գույքային դրության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից գույքային հարցի շուրջ բացասական բնույթի եզրակացություն տրամադրելու համար ձևակերպման հստակ կարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունից ելնելով	Ընդունվել է	Ընդունվել է

			առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասում «հիմքով խախտումների» բառերը փոխարինել «ուսումնասիրության արդյունքների» բառերով, իսկ «խնդրի առնչությամբ» բառերը փոխարինել «դեպքում» բառով: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով նույն օրենքի 69-րդ հոդվածում իրականացված փոփոխությունները առաջարկվում է նույն հոդվածի 3-րդ մասով լրացվող 1.2-րդ մասում «1-ին կետով» բառերը փոխարինել «17-րդ կետով» բառերով, իսկ 3-րդ մասով լրացվող 1.3-րդ մասում «արդյունքում» բառը փոխարինել «շրջանակում գույքային դրության հետ կապված անհամապատասխանության հիմքով» բառերով, «142-րդ» և «2. 1-ին» բառերը «69-րդ» և «17-րդ» բառերով:		
7.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 10-րդ հոդված, (լրամշակված 9-րդ հոդված)	Առաջարկվում է իրականացնել տեխնիկական բնույթի շտկումներ՝ մասնավորապես, նախագծի 10-րդ (լրամշակված 9-րդ հոդված) հոդվածի 1-ին մասում «մասում» բառը փոխարինել «մասի» բառով, իսկ 2-րդ մասում « Լրացնել» բառը փոխարինել «1-ին մասը լրացնել» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 11-րդ հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց տիրապետության տակ է հայտնվում այնպիսի	Ընդունվել է	Ընդունվել է

			բնույթի տեղեկություն, որն էականորեն խոցելի է դարձնում բարեվարքության ուսումնասիրություն անցնող պաշտոնատար անձին, այդ թվում՝ անձնական տվյալներ, քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու, վերջինիս նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացված լինելու, հայցվոր կամ պատասխանող հանդիսանալու վերաբերյալ: Արդյունքում՝ այդ տվյալների մշակման և օգտագործման վերաբերյալ անհրաժեշտ է դրսևորել խիստ զգուշավոր մոտեցում՝ խուսափելու պաշտոնատար անձի վերաբերյալ անձնական բնույթի տվյալների անհիմն հրապարակումից, որ վերջինիս կդնի խոցելի դրության մեջ՝ վերջինիս վերաբերյալ լայն ծավալի տվյալներ դարձնելով հրապարակային: Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ հանրությունը և համապատասխան համակարգերը, որոնց շրջանակներում գործում են բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնող անձինք, շահագրգիռ են բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում բացասական եզրակացությունը ստացած անձանց համապատասխան վարքագծի՝ իրավական գնահատական տալով՝ ապահովելու պետական համապատասխան մարմիններում բարեվարքության բարձր		

			մակարդակը, Նախագծերով արդեն իսկ սահմանված են բավարար իրավական երաշխիքներ: Մասնավորապես, բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքում խորհրդատավական բնույթի բացասական եզրակացությունը տրամադրելու դեպքում համապատասխան պաշտոնատար առնչությամբ պարտադիր հարուցվում է կարգապահական վարույթ/ ծառայողական քննություն: Վերոգրյալ խնդիրները և ռիսկերը հաշվի առնելով առաջարկվում է Նախագծերում բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունը դարձնել հրապարակման ոչ ենթակա: Արդյունքում առաջարկվում է հանել նախագծի 11-րդ հոդվածը:		
9.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 12-րդ հոդված (լրամշակված 10-րդ հոդված)	Առաջարկվում է Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասից հանել « ՝ օրենքով սահմանված կարգով» բառերը, 3-րդ մասում «Դատավորները» բառը փոխարինել «Այն դատավորները, ովքեր մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, դատավորի պաշտոում նշանակվելիս բարեվարքության ուսումնասիրություն չեն անցել,» բառերով: Միևնույն ժամանակ 3-րդ մասի 3-րդ կետում «և հակակոռուպցիոն պալատների» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է

			փոխարինել «պալատի» բառով և նույն կետից հանել «Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի,» և «Հակակոռուպցիոն դատարանի, Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի, Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի» բառերը: Միևնույն ժամանակ առաջարկվում է նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «4) մարզերի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրությունն իրականացվում է մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը:»: Առաջարկվում է նաև նույն հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով «4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված դատավորները		

			բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկը ներկայացնում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու հետո՝ մեկամսյա ժամկետում:»: Միևնույն ժամանակ առաջարկվում է նույն հոդվածի 5-րդ մասում «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով» բառերով: Հիշյալ փոփոխությունները բխում են այն անհրաժեշտությունից, որ բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության նոր պարբերականության ու ժամկետների պայմաններում համապատասխան փոփոխությունների են ենթակա նաև սահմանադրական օրենքի անցումային դրույթները: Միևնույն ժամանակ՝ հաշվի առնելով բարեվարքության առաջին ընթացիկ ուսումնասիրության, հատկապես՝ նախկինում բարեվարքության ուսումնասիրություն չանցած դատավորների բարեվարքության առաջին ընթացիկ ուսումնասիրության գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը առաջարկվում է վերջիններիս բարեվարքության ընթացիկ ուսումնասիրությունը բաշխել 4 տարիների մեջ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նման մոտեցումը չի հակասում ՀՀ որևէ ռազմավարական փաստաթղթի կամ ՀՀ միջազգային պարտավորություններին:		

10.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 12-րդ հոդված (լրամշակված 10-րդ հոդված)	Առաջարկվում է նաև նախագծի 12-րդ հոդվածը (լրամշակված 10-րդ հոդված) լրացնել նոր 6-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «6. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատավորները բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցելուց հետո բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնում են սույն օրենսգրքի 73.1 հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում, որը սկսվում է հաշվարկվել բարեվարքության առաջին ընթացիկ ուսումնասիրություն անցնելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:»: Հիշյալ առաջարկությունը բխում է այն անհրաժեշտությունից, որ նախկինում բարեվարքության որևէ ուսումնասիրություն չանցած դատավորների բարեվարքության ուսումնասիրությունը իրականացվի կրկնակի՝ ապահովելով միատեսակ մոտեցում բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության ընտրված կառուցակարգերի պայմաններում, միևնույն ժամանակ նաև ամբողջությամբ իրացնելով բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության նոր ներդրվող ինստիտուտի կառուցակարգերը:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	**ՀՀ**	Նախագծի 12-րդ	Առաջարկվում է նաև նախագծի 12-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

	կառավարություն	հոդված (լրամշակված 10-րդ հոդված)	հոդվածը (լրամշակված 10-րդ հոդված) լրացնել նոր 7-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «7. Այն դատավորները, ովքեր մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը դատավորի պաշտոնում նշանակվելիս անցել են բարեվարքության ուսումնասիրություն, բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնում են սույն օրենսգրքի 73.1 հոդվածով սահմանված կարգով: Սույն ժամկետի հաշվարկը սկսվում է վերջին նշանակմանը հաջորդող օրացուցային տարվանից:»: Հիշյալ առաջարկությունը բխում է այն անհրաժեշտությունից, որ ապահովվի նաև գործող դատավորները, ում պաշտոնի նշանակվելուց հետո դեռևս չի անցել 6 տարի ժամկետ, ևս անցնեն բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն՝ ընդհանուր կարգով:		
«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «որոնց եզրափակիչ մասերը» բառերը փոխարինել «որոնք» բառով, իսկ «են» բառը փոխարինել «չեն» բառով: Նշված փոփոխություններն ուղղված են բարեվարքության վերաբերյալ	Ընդունվել է	Ընդունվել է

			խորհրդատվական եզրակացությունների հրապարակայնության վերաբերյալ պահանջը հանելուն:		
2	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 3րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում «տեղեկատվությունը» բառը փոխարինել «տեղեկություն» բառով՝ հաշվի առնելով, որ «տեղեկատվություն» բառը նշանակում է որևէ բանի մասին տեղեկություն, տվյալ տալու գործողություն, իսկ «տեղեկություն» բառը նշանակում է լուր, գիտելիք, տվյալ: Միաժամանակ, առաջարկվում է նույն հոդվածի 5-րդ մասից հանել «, դրական վերապահումով » բառերը, քանի որ ՀՀ Ազգային ժողովի հետ քննարկումների արդյունքում կատարվել է այնպիսի եզրահանգում, որ այն պայմաններում, որ բարեվարքության ուսումնասիրության արդյունքում տրվող խորհրդատվական եզրակացությունը ունենում է հսկայական ազդեցություն պաշտոնատար անձի աշխատանքային գործունեության, վերջինիս հեղինակության, ինչպես նաև համապատասխանաբար դատական, դատախազական համակարգերի և քննչական մարմինների հեղինակության վրա, ուստիև առավել նպատակահարմար է ընտրել հստակ մոտեցում տրվող եզրակացության բնույթի վերաբերյալ ու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տալ միայն դրական կամ	Ընդունվել է	Ընդունվել է

			բացասական բնույթի եզրակացություն տրամադրելու հնարավորություն: Նման մոտեցման հետ զուգահեռ առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ մասում «13-րդ մասերով» բառերը փոխարինել «14-րդ մասերով» բառերով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքԻ 26.1-ին հոդվածում լրացվող 11-րդ մասը հանել, քանի որ այն վերաբերում է դրական վերապահումով տրամադրվող եզրակացություններին: Միևնույն ժամանակ հաշվի առնելով 11-րդ մասի փոփոխությունը, առաջարկվում է նույն հոդվածի 12-րդ մասում «բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացություն ներկայացվում է» բառերից հետո լրացնել «բացառապես» բառը, նույն մասի 2-րդ կետում «սույն հոդվածի 11-րդ մասի բ-դ կետերում նշված տեղեկությունները,» բառերը փոխարինել «հիմնավոր և հավաստի տվյալներ» բառերով, իսկ «հեղինակությունը» բառից հետո լրացնել «և որոնք վերաբերում են.» բառերով: Առաջարկվում է նաև 12-րդ մասի 2-րդ կետը լրացնել ա-գ ենթակետերով հետևյալ բովանդակությամբ. «ա) անձի կողմից նախկինում քրեական պատասխանատվության ենթարկված լինելու, վերջինիս նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու		

			մասին որոշումներ կայացված լինելու հանգամանքը՝ հաշվի առնելով արարքի բնույթը և դրա հնարավոր ազդեցությունը անձի հետագա մասնագիտական գործունեության վրա. բ) անձի վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու, անձի կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանման վերաբերյալ տվյալներ, որոնք, ձևավորում են բարեվարքության առնչությամբ ռիսկ՝ հաշվի առնելով արարքի բնույթը, դրա հնարավոր ազդեցությունը անձի հետագա մասնագիտական գործունեության վրա, խախտումների քանակը և դրանց առնչությամբ հնարավոր հանրային ընկալումը. գ) անձի աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի, այդ թվում՝ իրականացրած գործողությունների (անգործության), կայացրած որոշումների վերաբերյալ տեղեկություններ, որոնք վկայում են մարդու իրավունքների խախտումների մասին, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներում առկա այնպիսի հրապարակումներ, որոնք կարող են անձի մասնագիտական գործունեության		

			անկախության, անաչառության վերաբերյալ ձևավորել կասկած և անվստահություն՝ նվազեցնելով հանրային իշխանության մարմինների հեղինակությունը:»: Առաջարկվող կարգավորումներով հստակեցվում է, թե որ դեպքում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տրամադրում բացասական բնույթի խորհրդատվական եզրակացություն, ինչպես նաև ընդգծվում է, որ միայն հիմնավոր և հավաստի տվյալների առկայության դեպքում է հնարավոր տրամադրել բացասական բնույթի եզրակացություն: Իրականացված փոփոխությունների հաշվառմամբ առաջարկվում է շտկել հոդվածի համարակալումը:		
3	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածի 7-րդ մասում «հիմքով խախտումների» բառերը փոխարինել «ուսումնասիրության արդյունքների բառերով» իսկ 8-րդ մասը հանել, հաշվի առնելով որ այն ուղղված էր բարեվարքության խորհրդատվական բնույթի եզրակացության եզրափակիչ մասի հրապարակայնությանը:	Ընդունվել է	Ընդունվել է
«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «Որակավորման» բառը	Ընդունվել է	Ընդունվել է

			փոխարինել «որակավորման» բառով, իսկ 4-րդ մասում «7.1-ին և 7.2-րդ» բառերը փոխարինել «7.1-ին, 7.2-րդ և 7.3-րդ» բառերով: Հարկ է նշել, որ հոդվածում բովանդակային փոփոխություններ տեղի չեն ունեցել: Իրականացված փոփոխությունները կրում են տեխնիկական բնույթ:		
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում առաջարկվում է «1.1, 1,2, և 1.3» բառերը փոխարինել «1.1-ին, 1.2-րդ և 1.3-րդ» բառերով՝ նախագծի տեխնիկական պայմանները ապահովելու նպատակով: Նույն հոդվածի 1.1-ին մասում առաջարկվում է « թարմացնում» բառը փոխարինել «լրացնում» բառով, «ընթացիկ ուսումնասիրության» և «ներկայացված տեղեկատվությունը» բառերը հանել, իսկ «հարցաթերթիկում» բառը փոխարինել «հարցաթերթիկ» բառով: Նույն հոդվածի 1.2-րդ մասում «, ինչպես նաև սույն օրենքի 31.1-ին հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով», «ընթացիկ ուսումնասիրության», բառերը հանել, իսկ «տվյալների թարմացված» բառերը փոխարինել «լրացված» բառով, «հարցաթերթիկում» բառը փոխարինել «հարցաթերթիկը» բառով: Նախագծում իրականացված փոփոխությունները պայմանավորված են բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության իրականացման	Ընդունվել է	Ընդունվել է

			պարբերականության նվազեցման հետ, ինչպես նաև տեխնիկական բնույթի փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտությամբ:		
3	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացվող 20-րդ հոդվածի 4.1-ին մասի «քսանօրյա ժամկետում խորհրդատվական» բառերից հետո լրացնել «բնույթի» բառը: Սույն փոփոխությունը կրում է տեխնիկական բնույթ:	Ընդունվել է	Ընդունվել է
4	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացվող 29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «Խնդրի առկայությունը» բառերը փոխարինել «այնպիսի անհամապատասխանությունը» բառերով: Նշվածը պայմանավորված է գույքային դրության ուսումնասիրության արդյունքները առավել ամբողջական կերպով արտահայտելու անհրաժեշտությամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
5	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը հանել՝ պայմանավորված բարեվարքության ուսումնասիրության արդյունքները չհրապարակելու վերաբերյալ առկա մոտեցմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է

			Միևնույն ժամանակ, առաջարկվում է նույն հոդվածի 4-րդ մասում «տրամադրելու պահից» բառերը փոխարինել «տրամադրելուց» բառով, իսկ «երեք» բառը փոխարինել «վեց» բառով: Նույն մասի վերջին նախադասությունում «Բարեվարքության» բառից հետո լրացնել «վերաբերյալ» բառը, «ընթացիկ ուսումնասիրության» բառերից հետո լրացնել «շրջանակներում գույքային դրության ուսումնասիրության» բառերով, իսկ «գույքային դրության առնչությամբ խախտում հայտնաբերելու» բառերը փոխարինել «խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրելու» բառերով:		
6	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 7-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածով լրացվող նոր՝ 31.1-ին հոդվածի 1-ին մասում « յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ հերթական ատեստացիայի հետ միաժամանակ: Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք արտահերթ ատեստավորման ժամանակ բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն չեն անցնում:» բառերը փոխարինել «առաջին անգամ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում նշանակվելու տարվանից հետո վեցերորդ տարում:» բառերով: Միևնույն ժամանակ	Ընդունվել է	Ընդունվել է

			հոդվածը առաջարկվում է լրացնել նոր 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «2. Նախկինում քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած այն անձը, ով պաշտոնավարումը դադարելուց հետո, կրկին նշանակվում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում, բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնում է կրկին պաշտոնում նշանակվելուց հետո վեցերորդ տարում: 3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված ժամկետները հաշվարկվում են քննչական կոմիտեի ինքնավար պաշտոնում նշանակվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից: 4. Այն դեպքում, երբ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոնում նշանակվելուց հետո մինչև բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության տարին, անձը առաջխաղացման նպատակով անցնում է բարեվարքության ուսումնասիրություն, ապա բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության համար նախատեսված վեց տարվա ժամկետը սկսում է հաշվարկվել քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակ ընդգրկվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:»:		

			«6. Բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության վերաբերյալ հարցաթերթիկը լրացվում է բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնելու տարվա հունվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում:»: Իսկ նախկին խմբագրությամբ 3-րդ մասը հանել:		
7	**ՀՀ կառավարություն**	Նախագծի նոր 8-րդ հոդված	Առաջարկվում է նախագիծը լրացնել նոր 8-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. « **Հոդված 8.** Օրենքի 35-րդ հոդվածի. ~~3.~~5. 14-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ նախաձեռնելով քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակում ներառելու գործընթաց.»: ~~4.~~6. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 14.1-ին, 14.2-րդ և 14.3-րդ մասերով. «14.1. Սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունելուց հետո որակավորման հանձնաժողովը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին ծանուցում է՝ տասնօրյա ժամկետում բարեվարքության ուսումնասիրության հարցաթերթիկի՝ էլեկտրոնային համակարգում լրացնելու անհրաժեշտության	Ընդունվել է	Ընդունվել է

			վերաբերյալ: 14.2. Սույն հոդվածի 14.1-ին մասով նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում որակավորման հանձնաժողովը առաջխաղացման ենթակա անձանց կողմից բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում տվյալների լրացված լինելու վերաբերյալ տեղեկացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով մեկամսյա ժամկետում բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: 14.3. Սույն հոդվածի 14.2-րդ մասում նշված անձանց բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո որակավորման հանձնաժողովը որոշում է կայացնում անձին առաջխաղացման ցուցակում ներառելու կամ չներառելու վերաբերյալ:»: 3. 16-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «16. Որակավորման հանձնաժողովի որոշումը հանձնաժողովի նախագահն ատեստավորման օրվանից հետո (բացառությամբ սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունելու		

			դեպքի)՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է քննչական կոմիտեի նախագահին, իսկ սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետը սկսվում է հաշվարկվել սույն հոդվածի 14.3-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելուց հետո:»: Առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախկին կարգավորումներով քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ընթացիկ ուսումնասիրությունը իրականացվում էր ատեստացիայի գործընթացի հետ միաժամանակ, սակայն բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության նոր պարբերականության պայմաններում այլևս հնարավոր չէ այն իրականացնել ատեստացիայի գործընթացի հետ միաժամանակ: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ատեստացիայի գործընթացի արդյունքում քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար կարող է ապահովվել պաշտոնի առաջխաղացում, անհրաժեշտ է առաջխաղացման գործընթացին զուգահեռ ապահովել նաև այդ պաշտոնատար անձանց բարեվարքության ուսումնասիրության գործընթացը: Նշվածը		

			պայմանավորված է այն հանգամանքով, որ առկա մոտեցման համաձայն վերոգրյալ մարմիններում առաջխաղացման ժամանակ ապահովվում է նսև պաշտոնատար անձանց բարեվարքության ուսումնասիրությունը:		
8	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 8-րդ հոդված (լրամշակված 9-րդ հոդված)	Առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասից հանել « ՝ օրենքով սահմանված կարգով» բառերը, իսկ 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. 2024 թվականին պետք է բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնի քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 20 տոկոսը, 2025 թվականին՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 25 տոկոսը, 2026 թվականին՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 25 տոկոսը, 2027 թվականին՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 30 տոկոսը:»: Առաջարկվում է 8-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «4. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության վերաբերյալ առաջին ընթացիկ ուսումնասիրությունն անցնելու հերթականությունը սահմանվում է քննչական կոմիտեի նախագահի կողմից՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա	Ընդունվել է	Ընդունվել է

			ժամկետում: 5. 2024 թվականին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկը ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով քննչական կոմիտեի նախագահի կողմից բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնելու հերթականությունը սահմանելուց հետո մեկամսյա ժամկետում: 6. 2025, 2026 և 2027 թվականներին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում 7. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձինք բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցելուց հետո բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնում են սույն օրենքի 31.1 հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում, որը սկսվում է հաշվարկվել բարեվարքության առաջին ընթացիկ		

			ուսումնասիրություն անցնելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:»: Առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախկին կարգավորումներով քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ընթացիկ ուսումնասիրությունը իրականացվում էր ատեստացիայի գործընթացի հետ միաժամանակ, սակայն բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության նոր պարբերականության պայմաններում այլևս հնարավոր չէ այն իրականացնել ատեստացիայի գործընթացի հետ միաժամանակ: Արդյունքում փոփոխության են ենթարկվել նաև նախագծի անցումային դրույթները, որ նկարագրում են ի թիվս այլ հանգամանքների նաև բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն առաջին անգամ անցնելու առանձնահատկությունները քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար:		
«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է 2-րդ հոդվածում «խնդրի առկայությունը» բառերը փոխարինել «այնպիսի անհամապատասխանությունը» բառերով: Նշվածը պայմանավորված է	Ընդունվել է	Ընդունվել է

			գույքային դրության ուսումնասիրության արդյունքները առավել ամբողջական կերպով արտահայտելու անհրաժեշտությամբ:		
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածից հանել 3-րդ և 6-րդ մասերը: Սույն փոփոխություններն ուղղված են բարեվարքության ուսումնասիրության արդյունքների հրապարակայնության վերաբերյալ կարգավորումները հանելուն՝ ըստ առաջինից երկրորդ ընթերցում տեղի ունեցած քննարկումների արդյունքների: Միևնույն ժամանակ, առաջարկվում է նույն հոդվածի 4-րդ մասում «տրամադրելու պահից» բառերը փոխարինել «տրամադրելուց» բառով, «բնույթի» բառը հանել, իսկ «երեք» բառը փոխարինել «վեց» բառով: Նույն մասի վերջին նախադասությունում «Բարեվարքության» բառից հետո լրացնել «վերաբերյալ» բառը, «ընթացիկ ուսումնասիրության» բառերից հետո լրացնել «շրջանակներում գույքային դրության ուսումնասիրության» բառերը, իսկ «գույքային դրության առնչությամբ խախտում հայտնաբերելու» բառերը փոխարինել «խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրելու» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
3	**ՀՀ**	Նախագծի 5-րդ	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածում	Ընդունվել է	Ընդունվել է

	կառավարություն	հոդված	«2.1» բառը փոխարինել «2.1-ին» բառով: Առաջարկվում է նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսվող 35-րդ հոդվածում լրացվող 15.1-ին մասում «կամ թարմացնելու» բառերը հանել, իսկ 15.2-րդ մասում «տեղեկատվություն» բառը փոխարինել «տեղեկություն» բառով, իսկ «ուսումնասիրության» բառը հանել:		
4	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածով լրացվող նոր՝ 35.1-ին հոդվածի 1-ին մասում «յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ» բառերը փոխարինել «առաջին անգամ հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնում նշանակվելու տարվանից հետո վեցերորդ տարում» բառերով: Միևնույն ժամանակ առաջարկվում է նույն հոդվածի 2-րդ մասը խմբագրել՝ հետևյալ բովանդակությամբ «2. Նախկինում հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած այն անձը, ով պաշտոնավարումը դադարելուց հետո կրկին նշանակվում է հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնում, բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնում է կրկին պաշտոնում նշանակվելուց հետո վեցերորդ տարում: Նախագծի 6-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ և	Ընդունվել է	Ընդունվել է

			4-րդ մասերով՝ հետևայլ բովանդակությամբ. «3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված ժամկետները հաշվարկվում են հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնում նշանակվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից: 4. Այն դեպքում, երբ հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոնում նշանակվելուց հետո մինչև բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության տարին անձը առաջխաղացման նպատակով անցնում է բարեվարքության ուսումնասիրություն, ապա բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության համար նախատեսված վեց տարվա ժամկետը սկսում է հաշվարկվել հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջխաղացման ցուցակ ընդգրկվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:»: Միևնույն ժամանակ առաջարկվում է հոդվածի 4-րդ (լրամշակված 6-րդ մաս) մասում «յուրաքանչյուր երրորդ» բառերը փոխարինել «բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնելու» բառերով:		
5	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 7-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «՝ օրենքով սահմանված կարգով» բառերը՝ օրենսդրական տեքստի բարելավման նպատակով, քանի որ հիշյալ բառերը ծանրաբեռնում են քննարկվող	Ընդունվել է	Ընդունվել է

			դրույթի տեքստը: Միևնույն ժամանակ առաջարկվում է հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող այն անձինք, ովքեր նշանակվել են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնում են սույն օրենքի 35.1 հոդվածով սահմանված կարգով: Սույն ժամկետի հաշվարկը սկսվում է վերջին նշանակմանը հաջորդող օրացուցային տարվանից:»: Հիշյալ առաջարկությունը բխում է այն անհրաժեշտությունից, որ ապահովվի հակակոռուպցիոն կոմիտեում գործող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, ում պաշտոնի նշանակվելուց հետո դեռևս չի անցել 6 տարի ժամկետ, բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն՝ ընդհանուր կարգով անցնելը:		
«Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածում «կամ դրանում առկա տեղեկատվությունը թարմացնելու», «կամ թարմացնում է բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում առկա տեղեկությունը», «կամ թարմացնում է» և «բարեվարքության	Ընդունվել է	Ընդունվել է

			վերաբերյալ հարցաթերթիկում առկա տեղեկատվությունը» բառերը հանել: Նշված փոփոխությունները պայմանավորված են բարեվարքության ուսումնասիրության պարբերականության և բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացման եղանակների վերանայմամբ:		
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածում «կամ դրանում առկա տեղեկությունը» և «չի թարմացնում» բառերը հանել, իսկ «9.1-րդ» բառերը փոխարինել «9.1-ին» բառերով: Նշված փոփոխությունները պայմանավորված են բարեվարքության ուսումնասիրության պարբերականության և բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացման եղանակների վերանայմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
3	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածի «կամ դրանում առկա տեղեկությունը թարմացնելու» «կամ թարմացնում է բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում առկա տեղեկությունը:» բառերը հանել, «15.1-րդ» բառը «15.1-ին» բառով, իսկ «Որակավորման» բառը փոխարինել «որակավորման» բառով: Նշված փոփոխությունները պայմանավորված են բարեվարքության ուսումնասիրության պարբերականության և բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացման եղանակների վերանայմամբ և տեխնիկական	Ընդունվել է	Ընդունվել է

			փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտությամբ:		
4	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածով լրացվող նոր՝ 50.1-ին՝ 1) հոդվածի 1-ին մասում « յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ» բառերը փոխարինել «՝ առաջին անգամ դատախազի պաշտոնում նշանակվելու տարվանից հետո վեցերորդ տարում» բառերով, 2) 2-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «2. Նախկինում դատախազի պաշտոն զբաղեցրած այն անձը, ով պաշտոնավարումը դադարելուց հետո, կրկին նշանակվում է դատախազի պաշտոնում, բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնում է կրկին դատախազի պաշտոնում նշանակվելուց հետո վեցերորդ տարում:» փոխարինել նոր 2-րդ և 3-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ. 3) հոդվածը լրացնել նոր 3-րդ և 4-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված ժամկետները հաշվարկվում են դատախազի պաշտոնում նշանակվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից: 4. Այն դեպքում, երբ դատախազի պաշտոնում	Ընդունվել է	Ընդունվել է

			նշանակվելուց հետո մինչև բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության տարին դատախազը առաջխաղացման նպատակով անցնում է բարեվարքության ուսումնասիրություն, ապա բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության համար նախատեսված վեց տարվա ժամկետը սկսում է հաշվարկվել դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակ ընդգրկվելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:», 4) հոդվածի 4-րդ (լրամշակված 6-րդ) մասում «յուրաքանչյուր երրորդ» բառերը փոխարինել «բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնելու» բառերով:		
5	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 6-րդ հոդվածում «խնդրի առկայությունը» բառերը փոխարինել «այնպիսի անհամապատասխանությունը» բառերով: Նշվածը պայմանավորված է գույքային դրության ուսումնասիրության արդյունքները առավել ամբողջական կերպով արտահայտելու անհրաժեշտությամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
6	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 7-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ մասը հանել, իսկ նախկին խմբագրությամբ 5-րդ մասում (լրամշակված 4-րդ) իրականացնել հետևյալ փոփոխությունները. «տրամադրելու պահից» բառերը փոխարինել	Ընդունվել է	Ընդունվել է

			«տրամադրելուց» բառով, «երեք» բառը փոխարինել «վեց» բառով: Առաջարկվում է վերջին նախադասությունում իրականացնել հետևյալ փոփոխությունները՝ «Բարեվարքության» բառից հետո լրացնել «վերաբերյալ» բառը, «ընթացիկ ուսումնասիրության» բառերից հետո լրացնել «շրջանակներում գույքային դրության ուսումնասիրության» բառերը, «գույքային դրության առնչությամբ խախտում հայտնաբերելու» բառերը փոխարինել «խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրելու» բառերով:		
7	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 8-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծից հանել 8-րդ հոդվածը: Փոփոխությունն ուղղված է բարեվարքության խորհրդատվական բնույթի բացասական եզրակացության արդյունքում հարուցված կարգապահական վարույթի հրապարակայնության վերաբերյալ դրույթները հանելուն:	Ընդունվել է	Ընդունվել է
8	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 9-րդ հոդված (լրամշակված 8-րդ)	Առաջարկվում է Նախագծի 9-րդ (լրամշակված 8-րդ) հոդվածի 2-րդ մասից հանել «՝ օրենքով սահմանված կարգով» բառերը, 3-րդ մասում «Դատախազների» բառը փոխարինել «Այն դատախազները, ովքեր մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, դատախազի պաշտոնում նշանակվելիս բարեվարքության ուսումնասիրություն չեն անցել,» բառերով, «իրականացվում է» բառերը փոխարինել «անցնում են» բառերով,	Ընդունվել է	Ընդունվել է

			իսկ բարեվարքության առաջին ընթացիկ ուսումնասիրություն անցնելու համար սահմանել, որ 2024 թվականին անցնում են բարեվարքության ուսումնասիրություն չանցած դատախազների 20 տոկոսը, 2025 թվականին՝ 25 տոկոսը, 2026 թվականին՝ 25 տոկոսը, իսկ 2027 թվակնաին՝ 30 տոկոսը: Միևնույն ժամանակ, նախկին խմբագրությամբ 4-րդ մասը հանել և հոդվածը լրացնել նոր 4-րդ, և 5-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «4. 2024 թվականին բարեվարքության առաջին ընթացիկ ուսումնասիրություն անցնող դատախազները բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկը ներկայացնում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: 5. Սույն հոդվածի 3-րդ մասում նախատեսված 2025, 2026 և 2027 թվականներին բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն անցնող դատախազները բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության հարցաթերթիկը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում:», Հիշյալ փոփոխությունները բխում են այն		

			անհրաժեշտությունից, որ բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության նոր պարբերականության ու ժամկետների պայմաններում համապատասխան փոփոխությունների են ենթակա նաև սահմանադրական օրենքի անցումային դրույթները: Միևնույն ժամանակ՝ հաշվի առնելով բարեվարքության առաջին ընթացիկ ուսումնասիրության, հատկապես՝ նախկինում բարեվարքության ուսումնասիրություն չանցած դատավորների բարեվարքության առաջին ընթացիկ ուսումնասիրության գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը առաջարկվում է վերջիններիս բարեվարքության ընթացիկ ուսումնասիրությունը բաշխել 4 տարիների մեջ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նման մոտեցումը չի հակասում ՀՀ որևէ ռազմավարական փաստաթղթի կամ ՀՀ միջազգային պարտավորություններին: Առաջարկվում է նաև հիշյալ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «6. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատախազները բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցելուց հետո բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնում են սույն օրենքի 50.1 հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում, որը սկսվում է հաշվարկվել բարեվարքության առաջին ընթացիկ		

			ուսումնասիրություն անցնելու օրացուցային տարվան հաջորդող տարվանից:»: Բացի այդ առաջարկվում է հիշյալ հոդվածը լրացնել նաև նոր 7-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «7. Այն դատախազները, ովքեր դատախազի պաշտոնում նշանակվելիս անցել են բարեվարքության ուսումնասիրություն, բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն անցնում են սույն օրենքի 50.1 հոդվածով սահմանված կարգով: Սույն ժամկետի հաշվարկը սկսվում է վերջին նշանակմանը հաջորդող օրացուցային տարվանից:»: Հիշյալ առաջարկությունը բխում է այն անհրաժեշտությունից, որ ապահովվի նաև գործող դատախազների՝ ում պաշտոնի նշանակվելուց հետո դեռևս չի անցել 6 տարի ժամկետ, ընդհանուր կարգով բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության իրականացումը:		